ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐ

Մայիսի 5-ի առավոտյան Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի զանգերը ղողանջում էին՝ ազդարարելով Մայր Աթոռի միաբանության եւ հավատացյալների համախմբումը փաճարում, ճանապարհելու Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին Հովվապետական այցելության Հարավային Ամերիկայի Հայոց թեմեր: Միասնական աղոթքից հետո Նորին Սրբությունը ուղեկցող հոգեւորականների հետ ուղեւորվեց օդանավակայան: Վեհափառ Հայրապետի պատվիրակության կազմում էին Մայր Աթոռի վանորեից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը, Հոգեշնորհ Տ. Անանիա աբեղա Ծատուրյանը՝ որպես գավազանակիր, Կաթողիկոսական գրասենյակի գործավար Տ. Ադամ քահանա Մակարյանը, «Ծողակաթ» հեռուստաընկերության օպերատոր Սուրեն Տեր-Գրիգորյանը: Պատվիրակությանը Հարավային Ամերիկայում պետք է միանար նաեւ ԱՄՆ Արեւմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Նորին Սրբությունը նախ մեկնեց Փարիզ, որտեղ հանդիպումներ ունեցավ թեմական առաջնորդի եւ թեմական խորհրդի անդամների հետ՝ քննարկելով թեմի հոգեւոր-եկեղեցական կյանքին առնչվող հարցեր:

Մայիսի 6-ին Նորին Սրբության գլխավորած պատվիրակությունը, մեկնելով Փարիզից, ժամանեց Բրազիլիայի Հանրապետություն՝ Սան Պաուլո: Օդանավակայանում Ամենայն Հայոց Կաթողիկոսին մեծ ուրախությամբ դիմավորեցին Բրազիլիայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Ղարիբյանը, թեմի հոգեւորականներ, Բրազիլիայում Հայաստանի Հանրապետության դեսպան տիար Աշոտ Եղիազարյանը, թեմական-համայնքային վարչության անդամներ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, Հայրենակցական միությունների ներկայացուցիչներ, հավատացյալներ: Մայիսի 7-ին, առավոտյան ժամը 10:30-ին, Սան Պաուլոյի Սուրբ Գեւորգ եկեղեցում տեղի ունեցավ Հրաշափառի արարողություն՝ ներկայությամբ բազմաթիվ բրազիլահայ հավատացյալների, որ մեծապես խանդավառված եւ ոգեշնչված էին Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունից: Արարողությանը ներկա էին նաեւ Հայաստանի Հանրապետության դեսպանը, Քույր եկեղեցիների ներկայացուցիչներ:

Հրաշափառի արարողությանը Նորին Սրբությունն իր Հայրապետական խոսքն ուղղեց Բրազիլիայի Հայոց թեմի հավատացյալ հայորդիներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԽՈՍՔԸՍԱՆ ՊԱՌԻԼՈՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Շնորհազարդ հոգեւոր եղբայրներ,

Սիրելի հավատավոր ժողովուրդ,

Բրազիլիայի Հայոց թեմ կատարած Հովվապետական Մեր առաջին այցելության ջերմ հիշողություններին այսօր հավելվում են ձեզ հետ վերստին հանդիպման ուրախությունն ու բերկրանքը: Գոհություն եւ փառք ենք մատուցում Բարեգութ Աստծուն, որ շնորհեց Մեզ առիթը կրկին այցելելու Բրազիլիայի Հայոց թեմ, Հայրական Մեր օրհնությունն ու սերը բերելու ամենքիդ եւ Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու կամարների ներքո ձեզ հետ աղոթք բարձրացնելու առ Ամենաբարին Աստված՝ հայցով, որ Տերը հաստատուն պահի ձեզ հավատքի ու եկեղեցասիրության մեջ, զորացնի հույսերն ու կամքը՝ Ազգի, Եկեղեցու եւ Հայրենիքի համար ջանքեր ներդնելու ու նոր ձեռքբերումներ արձանագրելու:

1938 թվականին բրազիլական հողի վրա վեր խոյացավ հայոց հավատի առաջին վկա Սուրբ Գեւորգ եկեղեցին: Ձեր հայրերը՝ մեր Սուրբ Եկեղեցու եւ ժողովրդի հավատարիմ զավակները, անիմունջ ու անդուլ աշխատանքով եկեղեցու հովանու ներքո կազմակերպեցին հավատքին խարսխված ազգային-եկեղեցական իրենց կյանքը եւ շարունակեցին իրենց նվիրումի լուման ներդրնել բրազիլական հասարակության զարգացման ու առաջընթացի գործում՝ արժանանալով Բրազիլիայի իշխանությունների եւ ժողովրդի հարգանքին ու վստահությանը: Այս ամենի խոսուն վկաներն են Արմենիա հրապարակը, Հայոց Ցեղասպանության զոհերին նվիրված հուշակոթողը, ինչպես նաեւ Սան-Պաուլոյի «Արմենիա» նվիրական անունը կրող կայարանում զետեղված հուշագիրը, որի արձանագրության մեջ գնահատանքով շեշտվում է Ցեղասպանություն վերապրած ժողովրդի ջանասիրությունը, տաղանդն ու ապրելու կամքը եւ Բրազիլիայի բարօրությանն ի խնդիր հայոց գովելի նպաստը: Այսօր դուք շարունակում եք ձեր հայրերի բարի ավանդները:

Ձեր ջանքերի շնորհիվ է, որ զորացյալ ու հայաշունչ է հայ կյանքը Բրազիլիայում: Ձեր հանձնառություններով դուք շինություն եք բերել նաեւ հայոց հոգեւոր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության արգասավորմանը, Մայր Հայրենիքի զորացմանը: Բրազիլահայ մեծ բարերարների անունները արձանարգված են Վեհարանի պատվո տախտակներին, եւ այսօր նրանց գովելի օրինակով եւ նվիրումի նույն ոգով դուք մասնակցում եք հայության նոր կյանքի վերելքին, հայրենաշինության սրբազան գործին եւ մեր Սուրբ Եկեղեցու պայծառությանը: Մեր բարձր գնահատանքն ենք բերում ձեզ՝ սիրելի հավատավոր զավակներ Մեր, Մեր գնահատանքը առաջնորդ Սրբազան Հորը, հոգեւոր դասին, եկեղեցական վարչականներին, ազգային-մշակութային գործիչներին, բոլոր այն ազնիվ հայորդիներին, ովքեր իրենց անիմունջ եռանդով մասնակցում են հայրենի ավանդների պահպանությանը, ազգային-եկեղեցական մեր կյանքի առաջընթացին: Գիտենք, որ ազգային-եկեղեցական կյանքի պահպանումն ու զորացումը դյուրին չէ, սակայն հավատում ենք, որ ձեր ազնիվ, հայրենասեր զգացումներն ու ծառայությունները օրհնվում են երկնաբնակ

մեր հայրերի եւ հայրապետների կողմից նրանց մշտական բարեխոսությամբ Բարձրյալ Տիրոջ առջեւ:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, ամուր մնացեք ձեր եկեղեցասիրության ու ազգանվիրումի մեջ եւ ձեր հոգեւոր հայացքը միշտ ուղղեցեք դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, դեպի Մայր Հայրենիք, բիբլիական լեռն Արարատ, նահապակաց սրբազան բարձունք Ծիծեռնակաբերդ՝ հավատի ու նվիրումի զորություն առնելու եւ ձեր կյանքը արդյունավորելու՝ ի սեր ձեր ընտանիքների, մեր ժողովրդի, Բրազիլիո օրհնյալ երկրի, որը ձեզ համար նույնքան սիրելի հայրենիք է:

Մեր աղոթքն է, որ Տերն օրհնի Բրազիլիան՝ պահելով շինության ու բարօրության մեջ, եւ զորակից լինի Բրազիլիո իշխանություններին՝ արգասավորելու ջանքերը հանուն պետության առաջընթացի ու բարգավաճման: Մեր հայցն է նաեւ, որ Բարձրյալն Աստված զորավիգ լինի Քույր եկեղեցիներին՝ այս օրհնյալ երկրում նորանոր ձեռքբերումներով արդյունավորելու միջեկեղեցական բարեկամական հարաբերությունները, որոնք այսօր պտղաբերում են քրիստոնեական սիրո վրա հիմնված եղբայրական համագործակցության բարի արդյունքներով: Թող Տերը միշտ Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահի-պահպանի ձեզ, սիրելի զավակներ Մեր, քրիստոնեական լույս հավատքով պսակված ձեր կյանքի ու գործունեության ընթացքներում, որպեսզի ձեր հայրենանվեր ու աստվածահաճո գործերով փառավորվի անունը մեր Տիրոջ ու բարի համբավը մեր ժողովրդի:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեան. ամէն»:

Հարաշափառի արարողությունից հետո բոլոր հավատացյալները մոտեցան Հայրապետի Աջը համբուրելու եւ Նորին Սրբության օրհնությունը ստանալու: Հավատացյալները հուզումնալից ապրումներով իրենց խնդությունն էին արտահայտում Վեհափառ Հայրապետի Հովվապետական այցելության առիթով:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը եկեղեցու ընդունելության սրահում հանդիպում ունեցավ Քույր եկեղեցիների ներկայացուցիչների հետ եւ բարձր գնահատեց Բրազիլիայում Քույր եկեղեցիների համագործակցությունն ու եղբայրական սիրո ոգին՝ մեծապես կարեւորելով եկեղեցիների միասնական առաքելությունը արդի աշխարհի մարտահրավերների հաղթահարման եւ քրիստոսապատվեր արժեքներով մարդկության կյանքը լուսավորելու գործում:

«Հայ կենտրոնի» սրահում Նորին Սրբությունը հանդիպեց նաեւ բրազիլահայ երիտասարդների հետ, իր Հայրապետական օրհնությունն ու գնահատանքը բերեց երիտասարդներին նրանց եկեղեցանվիրումի ու ազգասիրության համար, ներկայացրեց Հայաստանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող գործունեությունը նոր սերնդի դաստիարակության, երիտասարդներին Եկեղեցու առաքելության մեջ առավել ներգրավման ուղությամբ, ծանոթացրեց հոգեւոր-կրթական հաստատությունների գործունեությանը եւ պատասխանեց երիտասարդներին հուզող հարցերին՝ հորդորելով ամուր ու նախանձախնդիր մնալ եկեղեցասիրության եւ հայենասիրության մեջ:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ նաեւ Բրազիլիայի Հայոց թեմի ներկայացուցչական մարմնի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության

Բուենոս Այրեսի մասնաճյուղի անդամների, Հայ Օգնության Միության՝ Սան Պաուլոյի եւ Օզասկոյի ներկայացուցիչների, «Հայաստան» Համահայկական հիմնադրամի ներկայացուցիչների, Սան Պաուլոյի ՀՅԴ անդամների, Բրազիլահայ գաղութի Հայ ակումբի վարչության անդամների հետ: Թեմի ներկայացուցչական մարմնի անդամների եւ վարչականների հետ հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը հորդորեց թեմում հիմնադրամներ ստեղծել՝ եկեղեցու պահպանության, եկեղեցու հովանու ներքո գործող հայ դպրոցի, ազգային, մշակութային կազմակերպությունների շարունակական գործունեությունն ապահովելու եւ արդյունավորելու համար:

Երեկոյան Հայոց Հայրապետի օրհնությամբ տեղի ունեցավ Սան Պաուլոյում Հայաստանի Հյուպատոսության բացման արարողությունը՝ ՀՀ Պատվո հյուպատոս Տիկին Հիլդա Պուրմայանի կազմակերպած հանդիսության ընթացքում: Բացման արարողությանը ներկա էին ՀՀ դեսպանը, Սան Պաուլո նահանգի նահանգապետ Ջերալդո Ալկեմինը, Բրազիլիայի կառավարության ներկայացուցիչներ, հայ համայնքի անդամներ, Պուրմայան ընտանիքի բարեկամներ:

Մայիսի 8-ին Սուրբ Գեւորգ եկեղեցում մատուցվեց Հայրապետական պատարագ, որին հավատացյալների բազմամարդ մասնակցությունն աննախադեպ էր Բրազիլիայի թեմում: Նորին Սրբությունն իր պատգամը հղեց Սրբազան Պատարագի արարողությանը ներկա բրազիլահայ հավատացյալներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՍՈՒՐԲ ԳԵՒՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ դուք, իբրեւ կենդանի վեմեր, կառուցվում եք
որպես հոգեւոր տաճար» (Ա Պետ. Բ 5):

Սիրելի հավատավոր զավակներ,

Ուրախությամբ է համակված Հայրապետիս հոգին: Փառք եւ գոհություն Երկնավորին, որ կրկին միաբանվել են մեր աղոթքները մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Հայրենիքի սիրով, ազգային մեր իղձերը մարմնավորելու, մեր լուսավոր ապագան կերտելու առ Աստված հայցով, որը երկինք է բարձրանում Աշխարհամատրան կիրակիի տոնական խորհրդով:

Այսօր Քրիստոսի Սուրբ Եկեղեցու հաստատման հիշատակի օրն է: Եկեղեցին հավաքականությունն է հավատացյալ ժողովրդի՝ իբրեւ Քրիստոսի խորհրդական մարմին, ուր հավատքի վեմի վրա հիմնված միության մեջ ներկա է Տերը: Այսպես է, որ հավատավոր ազգեր ու ժողովուրդներ եկեղեցիանում են, դառնում շնորհընկալը երկնային շնորհների եւ օրհնությունների, զորանում իբրեւ հոգեւոր կառույց, ինչպես առաքյալն է ասում. «Եւ դուք, իբրեւ կենդանի վեմեր, կառուցվում եք որպես հոգեւոր տաճար» (Ա Պետ. Բ 5): Հայ ժողովուրդն իբրեւ Եկեղեցի՝ Տիրոջ ներկայությամբ ապրող հոգեւոր կառույց՝ հարատեւ է մշտադալար կենդանությամբ, ծաղկունք ու զարթոնք ապրելու զորությամբ՝ հակառակ բոլոր փորձությունների, ինչպես վկայում է մեր պատմությունը: Դարեր ի վեր հավատի ու անձնուրացության բա-

ցառիկ օրինակներով, առաքինազարդ կյանքով ու գործով փայլել են քրիստոսակերտ մեր տաճարի «կենդանի վեմերը»՝ հայրապետներ, թագավորներ, իշխաններ, վարդապետներ, շինականներ ու արվեստի եւ մշակույթի նվիրյալներ, հայրենիքի պաշտպան զորավարներ եւ զինվորներ, որոնց յուրաքանչյուրի անսասան հավատի վրա է բարձրացել մեր պատմական Հայրենիքում հաստատված եւ այսօր՝ աշխարհասփյուռ հայությանը կամրջող մեր նվիրական հոգեւոր տաճարը՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Այսօր էլ մեր Սուրբ Եկեղեցին ամուր է հոգեւոր կյանքի զորությամբ, քրիստոնեական-ազգային արժեքների ամբողջ պարունակով, մեր ազգի զավակների միաբանությամբ, առ Հայրենին նախանձախնդրությամբ եւ հավատարմությամբ: Այդպիսի միասնությամբ ու միաբանությամբ են ծնունդ առել մեր Հայրենիքի անկախությունը, Արցախի ազատագրությունը: Այդ ոգով են Հայրենիքում եւ Սփյուռքում հաղթահարվել դժվարություններն ու խնդիրները եւ կերտվել եկեղեցաշեն, հայրենաշեն ու ազգանվեր ձեռքբերումները: Այսօր եւս մեր Եկեղեցին երաշխիքն է Սփյուռքում եւ Հայրենիքում մեր ժողովրդի հոգեւոր միասնության եւ սնուցողն ու պահպանողը ազգային ոգու, նկարագրի ու գիտակցության: Այս առաքելությունը լավագույնս Մենք իրականացած ենք տեսնում Բրազիլիայի Հայոց թեմում:

Սիրելիներ, դուք՝ որպես «կենդանի վեմեր» մեր Սուրբ Եկեղեցու, բրազիլական այս օրհնյալ հողի վրա ձեր ջանադրությամբ ու հանձնառություններով աշխույժ եք պահում եկեղեցու հովանու ներքո գործող դպրոցները, ազգային, մշակութային հաստատությունները, հայ կյանքը՝ բերելով բարի վկայությունները ձեր հավատքի: Համազգային մեր Սրբություն Սրբոցին՝ Սուրբ Էջմիածնին հավատարիմ ձեր ընթացքով, եկեղեցիների, հայկական դպրոցների, ծերանոցի, ազգային հաստատությունների պահպանությամբ ու խնամքով, դուք բազմիցս հաստատել եք առաքելական այն ճշմարտությունը, որ «եթե մի որեւէ անդամ ցավ է զգում, ցավ են զգում բոլոր անդամները, եւ եթե մի անդամը փառավորվում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները» (Ա Կորնթ. ԺԲ 26): Դուք փրփմեցիք համազգային մեր հոգսերի համար եւ անկեղծ սրտով ուրախացաք ձեռքբերումների ու հաջողությունների համար, որոնց մասնակից եք ձեր ամեն ջանքով ու կարելիությամբ:

Աշխարհամատրան այս Կիրակիին Բրազիլիայում նշվում է նաեւ մայրության եւ ընտանիքի տոնը: Այս նվիրական տոնի առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում Բրազիլիայի բոլոր մայրերին, ի մասնավորի ձեզ, սիրելի հայուհիներ: Քրիստոնեական բարոյական արժեքների եւ դրանց առանցքի շուրջ կազմավորվել եւ դարեդար զարգացել է ազգային-եկեղեցական մեր կյանքը: Ընտանիքում են մեր զավակներին փոխանցվել Աստծո խոսքը, Քրիստոսի պատգամներն ու պատվիրանները: Ընտանիքի ամուր եւ հուսալի հարկի ներքո է պահպանվել ոսկեղենիկ մեր լեզուն, հերոսական ոգով ու աննկուն պայքարով գրված մեր պատմությունն այստեղ է մատուցվել մատաղ մեր սերնդին՝ իբրեւ ազգային դաստիարակության դասագիրք, միով բանիվ՝ հայ ընտանիքից են սերել հայ ոգու եւ ինքնության օրինակներն ու դրսեւորումները: Զորեղ պահեցեք ոգին ասպվածասիրության, ազգանվիրումի ու հայրենասիրության, ոգին արիության ու աննկուն հավատքի, որպեսզի ձեր նվիրյալ ջանքերով ազգին ու եկեղեցուն հավատարիմ նոր սերունդ մեծանա՝ շարունակելով շեն ու ծաղկուն պահել թեմական կյանքը նորանոր հաջողություններով: Եկեղեցին, որի շուրջ ապրում եք իբրեւ մեծ եւ միասնական ընտանիք, այսօր իր առաքելության

մեջ առավել քան երբեւէ՝ պէտք է նորովի մատուցի ընտանիքի դերն ու կարեւորությունը մեր երիտասարդ սերնդին: Սրբազան մեր ավանդության հիմքի վրա այսօր պէտք է բարձրանան հայ քրիստոնէայի բարի վարքով ու ապրումով սրբագործված ընտանիքներ՝ իբրեւ անժխտելի վկայություն եւ անխոս քարոզչություն Քրիստոսի վարդապետության:

Սիրելի հավատավոր ժողովուրդ, հաղորդությունը մեր Տիրոջ սուրբ Մարմնին ու Արյանը միավորում է մեզ այստեղ՝ իբրեւ մեկ հոգի, մեկ կամք եւ մեկ խորհուրդ: Նրա փրկագործության հիշատակությամբ ամրանում են մեր մեծ ընտանիքի հիմերը, իրենց ուժն ու ամրությունն են գտնում մեր միասնության հիմերը: Տիրոջ փրկագործության հավատով՝ իբրեւ մեկ ազգ եւ Աստծո մեկ ժողովուրդ վերարժեւորենք ազգային-եկեղեցական մեր արժեքները՝ կառուցվելով իբրեւ «կենդանի վեմեր»՝ ի պայծառություն մեր հոգեւոր Տաճարի՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Մեր գնահատանքն ենք բերում ձեզ, սիրելիներ, որ մեր հավատքի, ազգային-եկեղեցական կյանքի կենդանի վեմերն եք: Մեր գնահատանքն ենք բերում Բրազիլիայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Ղարիբյանին, որ նվիրյալ ջանքերով առաջնորդում է Տիրախնամ թեմը: Սիրելի Սրբազան, թող Աստված ամրացնի Ձեզ Ձեր առաքելության մեջ՝ պարգեւելով նոր ձեռքբերումներ տերունապատվեր ծառայության ընթացքում: Մեր գնահատանքն ենք հայտնում թեմում ծառայող ուիտպապահ հոգեւոր դասին, ազգային կյանքին իրենց հոգածությունը բերող բարերարներին, բոլորաջան իրենց ծառայությունը մատուցող եկեղեցական վարչությանց անդամներին, ազգային հաստատությունների ու մեր մշակույթի նվիրյալներին, մեր սիրեցյալ ողջ ժողովրդին: Աստծո զորակցությունը ձեզ եւ երկնառաք շնորհը՝ նոր ձեռքբերումներով առավել շենացնելու Բրազիլիայի Հայոց թեմի ազգային-եկեղեցական կյանքը:

Աղոթում ենք, որ Տերը խաղաղության մեջ ապահով ու բարօր պահպանի Բրազիլիան ու նրա ապրվածասեր ժողովրդին, խաղաղ պահի մեր Հայրենիքը, ի Սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին եւ օրհնի մեր ջանքերը՝ հանուն պայծառության մեր Սուրբ Եկեղեցու, բարօրության եւ հզորության մեր Հայրենիքի:

Շնորհք, խաղաղութիւն եւ սէր Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն:

Արարողության ընթացքին Նորին Սրբությունը եպիսկոպոսական պանակով պարգեւատրեց Բրազիլիայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Ղարիբյանին՝ ի գնահատություն Սրբազան Հոր տասնամյակների նվիրյալ ծառայության եւ վաստակի:

Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց եկեղեցուն հարակից տարածքում՝ Հայոց Ցեղասպանության հուշահամալիրի կողքին տեղադրված խաչքարի օրհնության արարողությունը:

Երեկոյան տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ, որին մասնակցում էին հարյուրավոր հավատացյալներ, ովքեր մեծապես խանդավառված էին մեկ անգամ եւս Նորին Սրբության հետ հանդիպելու եւ Հայրապետական օրհնություններին արժանանալու առիթով: Ճաշկերույթի ժամանակ հայտարարվեց, որ Բրազիլիայի Հայոց թեմի հավատավոր

հայորդիները, Նորին Սրբության հորդորին անսալով, հիմնել են հիմնադրամ, որը կարեւոր ներդրում պիտի բերի նոր սերնդի հայեցի կրթության եւ քրիստոնեական դաստիարակության գործում: Լուրն ընդունվեց մեծ խանդավառությամբ: Վեհափառ Հայրապետը իր օրհնության խոսքն ուղղեց ճաշին մասնակից բազմաթիվ հայորդիներին՝ ի մասնավորի ասելով. «Միասիրտ աղոթքներով, միմյանց զորակից լինելով մեր նախնիք դարերի ընթացքին արժանահիշատակ ու պանծալի գործերով պսակեցին իրենց ընթացքը՝ բարի օրինակ ու ավանդույթ թողնելով մեզ: Այսօր մենք եւս մեր հայրերի ոգով սիրո սեղանի շուրջ ենք՝ աղոթքը մեր շուրթերին. «Արդարեւ, ամեն ինչում Դու բարձրացրիր եւ փառավորեցիր Քո ժողովրդին, Տե՛ր, եւ ամեն ժամ ու ամենուրեք անտես չարեցիր նրան Քո պաշտպանությամբ» (Իմաստ. Սող. ԺԹ 21): Գոհաբանական այս խոսքերով ենք փառք տալիս Աստծուն՝ մեր ունեցած բոլոր ձեռքբերումների համար: Աստծո շնորհներն ու օրհնությունները, որպեսզի միշտ անպակաս լինեն մեր ժողովրդի կյանքից, պիտի ապրենք Տիրոջ կենարար պատգամներով ու համախմբված մնանք իբրեւ մեկ ընտանիք Տիրոջ Սեղանի շուրջ, մեր Եկեղեցու մայրախնամ հարկի ներքո: Խնամատար այսպիսի սպասավորությամբ է երկու հազար տարիներ շարունակ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին իր տերունապատվեր ծառայությունը մատուցում մեր ժողովրդին, զորացնում Տիրոջ Ավետարանի լույսով, սնուցում հոգեւոր սրբազան արժեքներով, երանելի մեր հայրերի ժառանգությամբ եւ առաջնորդում դեպի Աստված: Եկեղեցին մեր մեծ ընտանիքն է, եւ ընտանիքը, ինչպես բնութագրել է Մկրտիչ Ա Խրիմյան Հայրապետը՝ «փոքր եկեղեցի»: Արդարեւ, ընտանիքն է առաջին սնուցողը հավատքի, մայրենի լեզվի, նվիրական այն բոլոր արժեքների, որոնց վրա խարսխված է հայ քրիստոնեական ինքնությունը: Այսօր, երբ Հայրենիքից հեռու հայորդյաց ուծացման վտանգը կա, առավել ուշադիր եւ նախանձախնդիր պիտի լինեք ձեր զավակներին ազգային արժեքներով կրթելու եւ զորացնելու հարցում՝ ամուր պահելով նրանց ազգային գիտակցությունն ու դիմագիծը, հայրենյաց սերն ու ազգասիրությունը, որ նրանք էլ շարունակեն հայրերի ավանդները:

Մայիսի 9-ին Նորին Սրբությունը մեկնեց Բրազիլիայի Հանրապետության մայրաքաղաք Բրազիլիա, որտեղ հանդիպում ունեցավ Բրազիլիայի փոխնախագահ Միշել Թեմերի հետ: Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ Հայաստանի եւ Բրազիլիայի միջեւ ամրացող հարաբերություններին, բարձր գնահատեց Սան Պաուլոյի քաղաքապետարանի կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը եւ հույս հայտնեց, որ Բրազիլիայում Ցեղասպանության ճանաչման գործընթացը շարունակական պիտի լինի, ու նաեւ Բրազիլիո պետությունը պիտի դատապարտի Հայոց Ցեղասպանությունը: Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց Բրազիլիայի իշխանություններին հայ համայնքի հանդեպ բարյացակամ վերաբերմունքի եւ մշտապես դրսեւորվող աջակցության համար, որով Բրազիլիայի հայերը իրենց ազգային-եկեղեցական կյանքի կազմակերպմամբ նաեւ մեծ ներդրում են բերում երկրի առաջընթացին ու բարգավաճմանը, հայ-բրազիլական հարաբերությունների սերտացմանը: Բրազիլիայի փոխնախագահը ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Բրազիլիա՝ վստահություն հայտնելով, որ Հայոց Հայրապետի այցը մեծապես պիտի նպաստի մեր երկրների ու ժողովուրդների միջեւ բարեկամության ամրապնդմանը եւ համագործակցության առավել արգասավորմանը: Նույն օրը Նորին Սրբությունն այցելեց Բրազիլիայի ՀՀ դեսպանատուն եւ զրույց ունեցավ Բրազիլիայում ՀՀ

դեսպան տիար Աշոտ Եղիազարյանի հետ: Քննարկվեցին դեսպանության գործունեությանն առնչվող հարցեր: Դեսպանի կողմից վերստին նշվեց, որ առաջիկային պիտի կառուցվի Բրազիլիայում ՀՀ դեսպանատան նոր շենքը՝ հովանավորությամբ Պատվո հյուպատոս Տիկին Հիլդա Պուրմայանի:

***

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, շարունակելով Հովվապետական այցելությունը Հարավային Ամերիկայի Հայոց թեմեր, մայիսի 10-ի երեկոյան ժամանեց Ուրուգվայի Հայոց թեմ: Նորին Սրբությանը դիմավորեցին թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հակոբ արքեպիսկոպոս Գըլընճյանը, Ուրուգվայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Վլադիմիր Կարմիրշալյանը, թեմական վարչականներ, հավատացյալներ: Հայոց Հայրապետը եւ նրա գլխավորած պատվիրակությունը օդանավակայանից ուղեւորվեցին Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյի Սուրբ Ներսես Շնորհալի եկեղեցի, որտեղ հավատացյալները խանդավառությամբ սպասում էին Վեհափառ Հայրապետին: Տեղի ունեցավ Հրաշափառի արարողություն եւ աջհամբույր: Հավատացյալ հայորդիները, մոտենալով Վեհափառ Հայրապետին աջհամբույրի համար, հուզմունքով իրենց ուրախությունն էին արտահայտում Նորին Սրբության այցելության առիթով: Երեկոյան Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, քննարկվեցին ներհամայնքային հարցեր:

Մայիսի 11-ի առավոտյան Նորին Սրբությունը, ՀՀ դեսպանի եւ ուրուգվայահայ համայնքի ներկայացուցիչների հետ այցելեց քաղաքապետարան եւ հանդիպում ունեցավ Մոնտեվիդեոյի քաղաքապետ Աննա Օլիվերայի հետ: Քաղաքապետը մեծ ուրախությամբ եւ ջերմությամբ ողջունեց Հայոց Հայրապետին: Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց հայ համայնքի հանդեպ քաղաքապետարանի մեծ աջակցությունն ու սատարումը՝ Արմենիա հրապարակի բացման, Հայաստանին նվիրված հուշակոթողի, Հայոց Ցեղասպանության հուշարձանի, խաչքարի զետեղման եւ Մոնտեվիդեոյում տարբեր հայանպաստ ձեռնարկների իրականացման գործում: Քաղաքապետն իր ուրախությունն արտահայտեց Նորին Սրբության այցելության կապակցությամբ, շեշտեց ուրուգվայահայերի հանդեպ իշխանությունների բարյացակամությունն ու բարի վերաբերմունքը եւ հայ համայնքին շարունակաբար զորակցելու պատրաստակամությունը: Այնուհետ Մոնտեվիդեոյի Անկախության հրապարակում Նորին Սրբությունն այցելեց Ուրուգվայի հերոս, ազատարար գեներալ Արտիգասի հուշահամալիր, որտեղ ծաղկեպսակ դրեց եւ աղոթեց նրա հոգու խաղաղության եւ հանգստության համար:

Նույն օրը Հայոց Հայրապետը հանդիպեց Ուրուգվայի նախագահ Խոսե Մուխիկայի հետ: Հանդիպման ընթացքում նախագահն իր մեծ հարգանքն ու սերն արտահայտեց առ հայ ժողովուրդը, նշելով, որ խորհրդային իշխանությունների տարիներին այցելել է Հայաստան, եղել մատենադարանում եւ մեծապես տպավորվել հայ մշակույթով: Նախագահը զոհունակությամբ անդրադարձավ Ուրուգվայի Հանրապետությունում բնակվող հայորդիների բերած մեծ ջանքերին ու ներդրումին երկրի առաջընթացի, բարօրության ու բարգավաճման

Հանդիպում Ուրուգվայի նախագահ Խոսե Մուխիկայի հետ

գործում: Վեհափառ Հայրապետը բարձրորեն գնահատեց Ուրուգվայի իշխանությունների շարունակական սատարումն ու աջակցությունը հայ համայնքին եւ Ուրուգվայի Հայոց թեմին: Նույն օրը Նորին Սրբությունն այցելեց նաեւ Ներսիսյան եւ Նուբարյան վարժարաններ, որտեղ սովորող հայ մանուկները ուրախությամբ ու ծափողջույններով դիմավորեցին Հայրապետին եւ ներկայացրեցին գեղարվեստական կատարումներ: Դպրոցների տնօրենները հանդես եկան ողջույնի խոսքով: Վեհափառ Հայրապետը մեծապես գնահատեց ուսուցիչների խնամքն ու ջանքերը երեխաների հայեցի դաստիարակության կարեւոր առաքելության արդյունավորմանն ի խնդիր եւ հորդորեց հայորդի մանուկներին ու պատանիներին միշտ սիրել մեր Եկեղեցին ու Հայրենիքը, լինել բարի եւ արժանավոր զավակները հայ ազգի:

Նորին Սրբությունն այցելեց նաեւ Մոնտեվիդեոյի Արմենիա հրապարակ, ուր հանդիսություն տեղի ունեցավ Հայաստանը խորհրդանշող հուշակոթողի մոտ: Երեկոյան համայնքային ճաշկերույթին ներկա էին բազմաթիվ հավատացյալներ: Ճաշկերույթի ընթացքում ցուցադրվեց Ծողակաթ հեռուստաընկերության պատրաստած տեսաֆիլմը Մայր Աթոռի գործունեության մասին, որով ուրուգվայահայ գաղութի անդամները ծանոթացան Նորին Սրբության Հայրապետության շրջանում իրականացված ձեռնարկներին եւ իրագործումներին:

Մայիսի 12-ին Նորին Սրբության հանդիսապետությամբ կատարվեց արգենտինահայ ազգային բարերար տիար Էդուարդո Էօրնեքյանի նոր օդանավակայանի եւ այնտեղ տեղադրված խաչքարի օրհնության արարողությունը: Խաչքարը տեղադրվել է տիար Էդուարդոյի ավիաընկերության բարձրասրահի պաշտոնյա, վաղամեռիկ Արամ Չուլջյանի հիշատակին: Արարողությանը ներկա էին օդանավակայանի տնօրեն Մարտին Էդուարդոյանը՝ տիար Էդուարդո Էօրնեքյանի եղբորորդին, Արամ Չուլջյանի կինը եւ մայրը՝ Անթառամ Ահարոնյանը, հայ համայնքի ներկայացուցիչներ, օդանավակայանի աշխատակիցներ: Նույն օրը Նորին Սրբությունը, շարունակելով Հովվապետական այցելությունը, մեկնեց Արգենտինայի Հայոց թեմ:

***

Մայիսի 12-ի երեկոյան Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Վլադիմիր Կարմիրշալյանը եւ Նորին Սրբության գլխավորած պատվիրակությունը, ժամանեցին Արգենտինայի Հայոց թեմ: Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին Արգենտինայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը, թեմական խորհրդի անդամներ, թեմի վարչականներ, հավատացյալներ, որ իրենց մեծ ուրախությունն արտահայտեցին Հովվապետական այցելության առիթով: Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել նաեւ Արգենտինայի Կրոնից փոխնախարար Խուան Լանդաբուրուն եւ երկրի իշխանությունների ներկայացուցիչներ: Փոխնախարարը, հանուն Արգենտինայի Հանրապետության կառավարության, ողջունեց Նորին Սրբությանը, ուրախություն հայտնեց Հովվապետական այցելության առիթով՝ նշելով, որ արգենտինաբնակ հայերը մեծապես հարգված են Արգենտինայում եւ իրենց գնահատելի ու ստեղծարար կյանքով ու գործերով միշտ վայելում են իշխանությունների բարյացակամությունն ու աջակ-

ցությունը: Բուենոս Այրեսում Նորին Սրբության պատվիրակությանը միացավ նաեւ ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, ինչպես նաեւ Բրազիլիայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Ղարիբյանը: Օդանավակայանից Նորին Սրբությունն ուղեւորվեց Բուենոս Այրեսի Սիվորի թանգարանի հանդիսությունների սրահ, որտեղ Հայոց Հայրապետին հանդիսավորությամբ դիմավորեցին բազմաթիվ հավատացյալներ, Քույր եկեղեցիների եւ օտար կրոնների ներկայացուցիչներ, Բուենոս Այրեսի կառավարության անդամներ: Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ Բուենոս Այրես քաղաքի կառավարության ղեկավար Մավրիսիո Մակրիի հետ: Վերջինս նշանակալի իրադարձություն համարեց Վեհափառ Հայրապետի Հովվապետական այցելությունը Արգենտինա եւ իր գնահատանքն արտահայտեց Արգենտինայի հայ համայնքի նկատմամբ: Բուենոս Այրես քաղաքի կառավարության կողմից Վեհափառ Հայրապետը հոչակվեց Բուենոս Այրեսի պատվավոր այցելու: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց պատվավոր կոչման համար եւ իր գնահատանքը բերեց Բուենոս Այրեսի եւ Արգենտինայի իշխանություններին արգենտինաբնակ հայորդիների հանդեպ դրսեւորած շարունակական զորակցության ու սատարումի համար եւ ողջունեց նաեւ Հայոց Հայրապետին դիմավորելու եկած Քույր եկեղեցիների եւ այլ կրոնների ներկայացուցիչների ներկայությունը: Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց հայ-արգենտինական միջպետական հարաբերությունների սերտացման եւ զորացման, ինչպես նաեւ մեր ժողովուրդների եւ Բուենոս Այրես ու Երեւան քույր քաղաքների միջեւ բարեկամության ու համագործակցության ամրապնդման համար: Այնուհետ Վեհափառ Հայրապետն ուղեւորվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Հավատացյալ հազարավոր հայորդիներ, որ հավաքված էին եկեղեցում եւ հարակից տարածքում, Վեհափառ Հայրապետին դիմավորեցին մեծ խանդավառությամբ, ծափողջույններով եւ վառվող ջահերով: Հրաշափառի արարողության ընթացքին Նորին Սրբությունն իր խոսքն ուղղեց հավատացյալներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի բարեպաշտ հայորդիներ,

Շնորհազարդ հոգեւոր հայրեր, Քույր եկեղեցիների ներկայացուցիչներ,

Մեծարգո դեսպան,

Հայրապետական Մեր ողջույնն ու օրհնությունն ենք բերում ձեզ մեր հանդիպման այս բերկրալի եւ աղոթական պահին:

Ուրախություն է Հայրապետիս հոգում, քանզի ողորմածն Աստված մեկ անգամ եւս շնորհը պարգեւեց Մեզ հայոց համազգային հոգեւոր կենտրոնից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գալու դեպի ձեզ: Յոթ երկար տարիներ են անցել այն օրվանից, երբ Հայրապետական Մեր առաջին այցելությամբ եկանք օրհնյալ այս երկիրը, ուր մեր ժողովրդի բազմահազար զավակներ իրենց մշտավառ հավատքով, աստվածահաճո ընթացքով ու գործերով շեն ու պայծառ են պահում հայ կյանքը՝ զորացնելով բարի համբավը մեր ժողովրդի:

Գոհունակություն եւ քաջալերություն է Մեզ համար, որ ամուր է ազգանվիրումի եւ եկե-

Ս.Խաչվանքի վերանորոգված խաչ

ղեցասիրության ոգին ասպվածասեր հայորդիներիդ: Արդարեւ, ամենայն գնահատանքի է արժանի թեմի շինությանն ու ազգային-եկեղեցական կյանքի առաջընթացին ձեր բերած նպաստը, ինչպես նաեւ նոր սերնդի հայեցի դաստիարակության կարեւոր գործի հանդեպ ձեր նախանձախնդրությունն ու հոգածությունը, ազգային ոգու փոխանցումը ձեր զավակներին, որի վկայությունն են ձեր ավանդաշատ դպրոցները: Հայոց կրթարանների հարկից ներս ոչ միայն իմացության լույսն է տրվում մանուկ եւ պատանի հայորդյաց, այլեւ շունչ եւ ոգի կերտվում, աճում եւ զորանում են ազգանվիրումն ու եկեղեցանվիրումը եւ նախանձախնդրությունը հանդեպ հայրենական արժեքները:

Սիրելիներ, ի սփյուռս աշխարհի հանուր հայության կյանքում Եկեղեցին է, որ փրկչական տերունապատվեր առաքելությամբ նաեւ համախմբում է հայ ժողովրդին եւ Աստծո օրհնության ներքո անսասան պահում նրա ազգային-քրիստոնեական դիմագիծը: Դարեր շարունակ Եկեղեցին է եղել եւ այսօր էլ է պատվարն ու խնամարկուն մեր ազգի, Եկեղեցին է, որ զորացնում է ազգին դժվարությունների ու մարտահրավերների դեմ պայքարում եւ ոգեշնչում նոր արարումների՝ հանուն բարօր ներկայի եւ պայծառ գալիքի: Եկեղեցին միայն քարեղեն կառույց չէ, Եկեղեցին հավատացյալ մեր ժողովրդի հավաքականությունն է: Եկեղեցին դուք եք, սիրելի հավատավոր զավակներ մեր, հավատավոր ձեր կյանքով ու գործերով, ըստ առաքելական խոսքի՝ «տաճար Հոգւոյն Սրբոյ» եք, անդամները Քրիստոսի խորհրդական մարմնի: Հիրավի, մեր ժողովրդի պատմությունը նման է Քրիստոսի երկրավոր կյանքի ընթացքին: Եղել են չարչարանքներ, խաչելություն, Յեղասպանության գողգոթա, բայց հարության հավատքի հաղթանակն է պսակել հարատեւությունը ազգի եւ Հայոց Եկեղեցու: Այդ հաղթանակն է, որ այսօր երեւում է տիրախնամ թեմում ձեր ձեռքբերումների մեջ, արտացոլվում եկեղեցանվեր ու ազգասեր ձեր կյանքի ընթացքներում: Մենք հավատում ենք, որ նորանոր հաջողություններ պիտի ունենա թեմը, եւ ձեր ազգաշահ իրագործումները պիտի հավելվեն ազգային մեր ձեռքբերումներին՝ պայծառություն, բարօրություն ու առաջընթաց բերելով մեր ժողովրդին:

Փառք Ամենակալին, որ արթուն է պահում բարեգործության ոգին հանուր հայության կյանքում, Արգենտինայի Հայոց թեմում, ուր հայրենասեր ու եկեղեցանվեր բարերարները իրենց ասպվածահաճո, ազգաշեն հանձնառություններով ամուր սյուներն են թեմական կյանքի առաջընթացի ու բարգավաճման: Շնորհիվ նրանց նախանձախնդիր հոգածության՝ թեմական կյանքում բարեգարդ են եկեղեցիները, արգասավոր՝ հայ դպրոցների կրթական առաքելությունը, արդյունազարդ՝ ազգային-մշակութային, բարեսիրական, հայրենակցական միությունների կարեւոր գործունեությունը, եւ առաջընթացի նոր իրագործումներով, ազգաշահ ու եկեղեցանպաստ արարումներով զորացյալ է արգենտինահայոց կյանքը:

Սիրելիներ, Տիրախնամ թեմում ձեր հոգեւոր-եկեղեցական կյանքն առավել պիտի զորանա հավատավոր հայորդիներիդ միասնական, եկեղեցանվեր ընթացքով, հոգեւորականների շարունակական, ավելի արգասավոր սպասավորությամբ: Այսօր Մենք ուրախ ենք ներկայացնելու, որ Արգենտինայի Հայոց թեմում հոգեւոր սպասավորության ենք կոչել երկու հոգեւորականների, ովքեր մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր-կրթական հաստատություններում ուսումնառությունից եւ Մայր Աթոռում իրականացրած օգտաշատ սպա-

սավորությունից հետո իրենց ջանքերը պիտի բերեն Տիրոջ խոսքի քարոզչության առաքելությանը, հոգեւոր-եկեղեցական կյանքի զորացմանը արգենտինահայ համայնքում, Արգենտինայի այս օրհնյալ երկրում:

Այսօր Մենք գոհունակությամբ ենք անդրադառնում, որ Բուենոս Այրեսում եւ ընդհանրապես Արգենտինայում համերաշխության ու սիրո ոգով են արդյունավարդվում հարաբերություններն ու գործակցությունը Քույր եկեղեցիների հետ: Մեր միասնական աղոթական ջանքերով է, որ նոր ժամանակներում պիտի կարողանանք Տիրոջ Ավետարանի լույսն ու օրհնությունը բերել եւ սփռել մարդկության կյանքում՝ հաղթահարելու մարտահրավերներն ու խնդիրները արդի աշխարհի:

Այսօր Մեր գնահատանքի խոսքն ենք ուղղում նաեւ Արգենտինայի պետական այրերին եւ եղբայրասեր ժողովրդին: Արգենտինան Հայոց Ցեղասպանությունն ընդունողների ու դատապարտողների շարքում առաջիններից էր, եւ այս երկրում զգացվում է եղբայրական սերն ու բարեկամությունը հանդեպ հայ ժողովուրդը. այստեղ հայի շունչն ամենուր է, «Արմենիա», «Արարատ» հրապարակներում, Ծիծեռնակաբերդի մանրակերտով, Հայոց Ցեղասպանության հիշատակը հավերժացնող խաչքարով, Սարդարապատի հերոսամարտը հավերժացնող հուշարձան - կոթողով: Այս ամենը խոսուն վկայություններն են Արգենտինայի իշխանությունների ու ժողովրդի բարի կամեցողության եւ հյուրընկալության:

Վերստին Մեր օրհնություններն ենք բերում ձեզ ամենքիդ՝ սիրելի հայորդիներ: Մեր գնահատանքն ենք հայտնում թեմական առաջնորդին՝ սիրելի Սրբազանին, թեմական, համայնքային վարչությանց անդամներին եւ մաղթում առավել կորով ու եռանդ՝ Արգենտինայի Հայոց թեմի ազգային-եկեղեցական կյանքը նոր ձեռքբերումներով հարստացնելու եւ արգենտինահայ համայնքում պայծառություն ու բարօրություն հավելելու համար:

Աղոթում ենք, որ Տերը շեն ու բարօր պահի Արգենտինայի Հայոց թեմը եւ քաջառողջություն ու արեւշատություն, երկնառաք բյուր բարիքներ պարգեւի ձեզ եւ պահպանի Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

***

Այնուհետ հավատացյալները մոտեցան աջհամբյուրի՝ արտահայտելով Նորին Սրբության Հովվապետական այցելության առիթով իրենց բերկրանքն ու խնդությունը, որ դրսեւորվում էր նաեւ հավատացելոց ժպիտների եւ ուրախության արցունքների, դրանց միախառնված հուզմունքի միջոցով: Հրաշափառ արարողությունից հետո Նորին Սրբությունը հանդիպեց թեմական խորհրդի անդամների, համայնքի ներկայացուցիչների հետ՝ քննարկելով ներհամայնքային հարցեր:

Մայիսի 13-ին Նորին Սրբությունն այցելեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական դպրոց, որի հանդիսությունների սրահում հավաքվել էին Բուենոս Այրեսի հայկական յոթ դպրոցների աշակերտները: Երեխաները հաց ու աղով, բուռն ծափահարություններով եւ ուրախության գոչյուններով դիմավորեցին Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունն իր

Արգենտինայի նախագահ Ք. Կիրշների հետ

գոհունակությունն արտահայտեց մանուկ եւ պատանի հայորդիների հետ այս հանդիպման առիթով՝ գովելով դպրոցների բարերարների, հոգաբարձուների, մանկավարժների եւ ծնողների խնամքն ու հոգածությունը հայ դպրոցների նկատմամբ: Վեհափառ Հայրապետը հորդորեց դպրոցականներին նախանձախնդիր լինել ուսման մեջ, քաջ իմանալ մեր ժողովրդի եւ Սուրբ Եկեղեցու պատմությունը, լավ սովորել մայրենի լեզուն եւ առավել զորանալ հավատքի, եկեղեցանվիրումի ու հայրենասիրության մեջ: Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը պատասխանեց դպրոցականներին հուզող հարցերին: Նույն օրը Հայոց Հայրապետն այցելեց Արգենտինայում ՀՀ դեսպանատուն, իսկ երեկոյան Բուենոս Այրեսի կաթոլիկ տաճարում տեղի ունեցավ էկումենիկ արարողություն: Ներկա էին Քույր եկեղեցիների ներկայացուցիչներ եւ հավատացյալներ, բազմաթիվ հայ հավատացյալներ, դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԿԱԹՈԼԻԿ ՏԱՃԱՐՈՒՄ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Սիրեցյալ եղբայրներ ի Քրիստոս,

Սիրելի հավատացյալներ,

Ուրախություն է Մեզ համար Հարավային Ամերիկայի երկրներ կատարած Մեր Հովվապետական այցի ընթացքում վերստին այցելել այս Սուրբ տաճար, որի կամարների ներքո Մեր նախորդ այցելության ընթացքում աղոթք բարձրացրինք առ Երկնավորը՝ սիրելի Կարդինալի, Կաթոլիկ Եկեղեցու սպասավորների ու հավատացելոց, Քույր եկեղեցիների ներկայացուցիչների հետ միասին: Այսօր Մեր օրհնություններն ու բարեմաղթանքներն ենք բերել ձեզ ամենքիդ, սիրելի հավատակից եղբայրներ ու քույրեր, որ այստեղ եք ողջունելու եւ նվիրական այս հարկից ներս աղոթակից լինելու Հայոց Հայրապետին:

Սիրելիներ,

Մենք եւ Մեզ ուղեկցող շքախմբի անդամները ձեզ՝ մեր բարեկամներիդ, այցի ենք եկել Բիբլիական Արարատի ստորոտին սփռված Հայաստան աշխարհից: Եկել ենք մի երկրից, որը 301 թ. առաջինն էր, որ քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն: Մեր ժողովուրդը այն ձուլեց իր կյանքին, հինգերորդ դարի հայ պատմիչի բնորոշմամբ՝ դարձրեց իր մաշկի գույնը: Հավատքը ուժ տվեց մեր ժողովրդին՝ ստեղծելու հայոց գիր ու քրիստոնեական հարուստ գրականություն, արվեստ ու մշակույթ, որն անբաժան մասը լինելով համաքրիստոնեական մշակույթի, ուրույն տեղ ունի նրանում: Հայ ժողովրդի համար հավատքը եղավ ամուր վեմ, որի վրա հաստատված Հայոց տունը ապրեց դարեր շարունակ, հակառակ կործանարար հողմերին՝ հարակայեց Մայր Հայրենիքում ու Սփյուռքում եւ հավատարիմ Մայր Եկեղեցուն՝ պահպանեց իր ազգային դեմքն ու նկարագիրը ի սփյուռս աշխարհի:

Այսօր առ Քրիստոս հավատքը վերազարթոնք է ապրում Հայաստանում, իր տեղը վերագտնում մեր ժողովրդի առօրյա կյանքից ներս: Հասարակության լայն շերտերի հետ կապն ամրապնդվում է լայնածավալ քարոզչական ծրագրերի, հոգեւոր կրթադաստիարակչական միջոցառումների իրականացմամբ, որոնց ծառայեցվում են ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները: Զորանում են Եկեղեցի եւ պետություն հարաբերություն-

ները: Ուրախ ենք անդրադառնալու, որ հավատքի վերազարթոնքն ու Եկեղեցու հզորացումը հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքում ուղեկցվում է միջեկեղեցական կապերի ամրապնդմամբ՝ հոգեւոր պետերի փոխայցերով, կրթական եւ բարեսիրական համատեղ ծրագրերով, հանուն աշխարհի խաղաղության եւ համերաշխության միջկրոնական երկխոսության զորացմամբ:

Քաղցրությամբ ենք հիշում, երբ 2001 թ. Հայոց Մեծ դարձի 1700-ամյա հոբելյանին Մեզ խնդակից եղան բազում Եկեղեցիների հոգեւոր պետեր, առաջնորդներ եւ սպասավորներ: Հակառակ ծերունազարդ տարիքին ու մարմնական տկարության՝ եղբայրական այցով եւ իր աղոթքներով այդ օրերին Մեզ եւ մեր ժողովրդի հետ էր բոլորիս կողմից սիրված եւ անմոռանալի, մեր քույր Կաթոլիկ Եկեղեցու կողմից այլեւս երանելի հռչակված Հովհաննես Պողոս Բ Պապը Հռոմի: Մեզ հետ էին նաեւ Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Առաջինը, Համայն Ռուսիո եւ Մոսկվայի Պատրիարք Ալեքսի Երկրորդը, այլ Ուղղափառ, Անգլիկան, Հին Արեւելյան Եկեղեցիների պետեր եւ ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչներ: Հայ եւ Կաթոլիկ եկեղեցիների բարեկամական եւ եղբայրական ամուր կապերի արտահայտությունը եւ վերահաստատումն էր մեր այցը Հռոմ Բենեդիկտոս ԺԶ Պապի հրավերով 2008 թ.: Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ սիրո գործակցության այդ ջերմ ոգին է առաջնորդողը մեր եկեղեցիների ներկայացուցիչների եւ մեր զավակների միջեւ ամրապնդվող հարաբերություններում:

Հարավային Ամերիկա կատարած մեր Հայրապետական վերջին այցից յոթ տարի անց, գոհունակությամբ ենք անդրադառնում, որ Հարավային Ամերիկայի երկրներում մեր Եկեղեցու եւ Քույր եկեղեցիների թեմերի միջեւ, ինչպես նախկինում, այսօր եւս նույն ոգով ամուր են միջեկեղեցական կապերը: Ուրախ ենք լսել եւ տեղեկանալ Արգենտինայի Ազգային Եկեղեցական Էկումենիկ խորհրդի օգտաշատ գործունեության մասին՝ հանուն Արգենտինայի ժողովուրդների հավատքի զորացման, տերունապատվեր եղբայրսիրության ոգու ամրապնդման, այս օրհնյալ երկրում Քրիստոսի Ավետարանի պատգամներից բխող բարոյական արժեքների ամրապնդման եւ սիրով ու համերաշխությամբ լի կյանքի խթանման:

Այս հիշարժան օրվա առթիվ Մենք Մեր գնահատանքն ենք ուղղում այստեղ ներկա հոգեւորականաց դասին եւ աշխարհիկ գործիչներին այս գեղեցիկ արարողությունը կազմակերպելու եւ Հայոց Հայրապետին ցուցաբերած հարգանքի միջոցով՝ մեր Եկեղեցու հանդեպ ձեր սերը դրսեւորելու համար:

Քաջատեղյակ ենք հայ Ժողովրդի հանդեպ ձեր առանձնահատուկ հարգանքին, նվիրական եւ ջերմ զգացումներին, որոնք իրենց արտահայտությունն են գտնում նաեւ ձեր գործերում: Մխիթարություն է Մեզ համար, որ դուք եւս կիսում եք վիշտը Ցեղասպանություն վերապրած Մեր ժողովրդի, զորակից եք հայորդիներին, որի վկայությունն է նաեւ այս նվիրական տաճարում տեղադրված խաչքարը՝ նվիրված Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին:

Այս Սուրբ Տաճարում, երբ միասնաբար աղոթք ենք վերառաքում առ Բարձրյալն Աստված մեր եկեղեցիների, մեր երկրների ու ժողովուրդների, աշխարհում խաղաղության

համար, հայցում ենք, որ Տերը արեւշատություն, երկար կյանք եւ նորանոր ձեռքբերումներ պարգեւի ձեզ ամենքիդ: Աղոթում ենք նաեւ, որ Բարձրյալն Աստված խաղաղ ու շեն պահպանի Արգենտինան, Իր բյուր օրհնություններն անպակաս պահի այս օրհնյալ երկրից եւ նրա բարեպաշտ ժողովրդից՝ շնորհելով նորոգ առաջընթաց եւ բարգավաճում:

Որպես Մեր գնահատանքի արտահայտություն՝ տաճարին ենք նվիրաբերում հայ սրբանկարիչների կողմից պատրաստված Տերունի այս պատկերը՝ հայցելով, որ Ամենակալ Տերը Իր հովանի Աջի զորության ներքո մշտապես պահի ու պահպանի Արգենտինայի Կաթոլիկ Եկեղեցին, այստեղ հաստատված քրիստոնյա Քույր եկեղեցիներին, նրանց սպասավորներին՝ հաջողելով նրանց բարի գործերն ու ձեռնարկները ի փառս Աստուծո եւ ի պայծառություն եւ ի շինություն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու:

Արարողության ավարտից հետո կաթոլիկ տաճարում տեղադրված Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի խաչքարի մոտ Նորին Սրբությունն աղոթեց Ցեղասպանության նահատակների հոգիների խաղաղության եւ հանգստության համար:

Մայիսի 14-ին Նորին Սրբությունն այցելեց Հայ Օգնության Միության ծերանոց եւ իր օրհնությունը բերեց ծերանոցում ապաստանած տարեցներին՝ բարձր գնահատելով ՀՕՄ-ի անդամների խնամատար եւ հոգածու գործունեությունը: Տարեցներն իրենց մեծ գոհունակությունը հայտնեցին Նորին Սրբության այցելության եւ Հայրապետական օրհնությունների համար: Վեհափառ Հայրապետն այցելեց նաեւ Հայ մշակութային միություն, որտեղ երիտասարդները հանդես եկան պարային գեղեցիկ կատարումներով: Նորին Սրբությունը գնահատեց Հայ մշակութային միության գործունեությունը եւ կարեւորեց նաեւ Սփյուռքում պահպանումն ու զարգացումը հայ պարարվեստի, որով նույնպես դրսեւորվում են մեր ժողովրդի ոգին ու նվիրական զգացումները: Երեկոյան Նորին Սրբությունը մասնակցեց գրող եւ մանկավարժ Պետրոս Հաճյանի գործունեության 60-ամյակի հանդիսությանը եւ ուսուցչական ու գրական բեղուն առաքելության եւ եկեղեցանվեր վաստակի համար Պետրոս Հաճյանին շնորհեց Առաքելական Սուրբ Եկեղեցու Սուրբ Ներսես Շնորհալի պատվո բարձր շքանշանը: Հանդիսության ընթացքին Վեհափառ Հայրապետը խոսք ուղղեց հանդիսության մասնակիցներին եւ Տիար Պետրոս Հաճյանին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՊԵՏՐՈՍ ՀԱՃՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Սիրելի ներկաներ,

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ եւ Մեր սրտագին շնորհավորանքները՝ մեծարգո Տիար Պետրոս Հաճյանին, ում հանրային, կրթական ու գրական գործունեության 60-ամյակի նշանավորման հանդիսությանն ենք համախմբվել այսօր:

Մենք ուրախ ենք կրկին Մեր բարձր գնահատանքի խոսքն ուղղելու ազգային-հասարակական ասպարեզում տասնամյակների նախանձախնդիր գործունեություն ծավալած հայորդուդ: Ծանոթ ենք գրականության անդաստանում եւ կրթական ոլորտում Ձեր եռան-

դագին առաքելությանը, որն արդյունագարդ է բազում ձեռքբերումներով եւ գովելի վաստակով: Դուք անխոնջ մշակի նախանձախնդրությամբ գրական եւ կրթական անդաստանի ճանապարհներին սերմանել եք բարի արգասիքները Ձեր ջանքերի, որոնք հայորդյաց հոգիներում արմատավորվել են ու պտուղ տվել, դարձել ձեր ընթերցողների եւ աշակերտների ազգասիրության ու հայրենասիրության մղիչ ուժը: Արգենտինայի Հայոց թեմ Մեր նախորդ այցելության ընթացքում Մենք առիթն ունեցանք անձնապես ճանաչելու Ձեզ, ինչպես նաեւ՝ ի մոտո հաղորդ դառնալու այն եկեղեցանպաստ ու ազգօգուտ գործերին, որ նախանձախնդրությամբ իրականացնում եք՝ ի սեր հայոց լուսավոր կյանքի առաջընթացի ու հոգեւոր վերազարթոնքի:

Յուրաքանչյուր անձ ունի ազգին ծառայելու իր առաքելությունը: Դուք Ձեզ համար որպես ծառայական ուղի ընտրել եք մանկավարժությունն ու գրականությունը, որոնք ազգային-մշակութային անդաստանում կարեւոր ոլորտներն են հայ ինքնության պահպանման ու սերունդների դաստիարակության համար: Դրանք այն կարեւոր ճյուղերն են, որոնց բարերար արդյունքներով սնվում են հոգին ու միտքը, ձեւավորվում նոր սերնդի գիտակցությունը, զորանում առ Հայրենին սերն ու հավատարմությունը: Մեր ժողովրդի պատմությունից գիտենք, թե որքան կենսական դերակատարություն են ունեցել հայ լեզուն, գիրն ու դպրությունը ազգիս կյանքում: Գրականության ու մանկավարժության արգասաբեր անդաստաններում երանելի մեր սրբերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բեղուն սպասավորությամբ լուսազարդվեց հայ հոգին, զորացավ միտքը, սերունդներ դաստիարակվեցին եւ դարձան նոր ջահակիրները հայոց պայծառ գալիքի: Արդարեւ, լեզուն եւ գիրը այն կարեւոր նախապայմաններն են, առանց որոնց չկա ազգային դիմագիծ ու նկարագիր: Մանուկների դաստիարակության համար Ձեր պատրաստած դասագրքերով եւ Ձեր գովարժան ստեղծագործություններով Դուք սահակ-մեսրոպյան ոգով հայորդիներին եք փոխանցում հայոց հարուստ ներաշխարհի գանձերը, հայրենիի նկատմամբ սիրո եւ հավատարմության ոգին՝ խնամելով հայորդյաց սերտ կապը ազգային մեր անզուգական ժառանգությանը:

Այսօր գոհունակությամբ ենք անդրադառնում, որ Ձեզ պես նվիրյալ մտավորականներ, գրչի մշակներ լծակից են Եկեղեցու առաքելությանը, հայապահպանության կարեւոր գործին: Մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր գովելի ծառայությունների եւ տարիների արդյունաշատ վաստակի համար Դուք արդարորեն արժանացել եք բազում պարգեւների, եւ հայորդուդ կուրծքը զարդարվել է նաեւ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից շնորհված մեր Սուրբ Եկեղեցու պատվո բարձր պարգեւով՝ Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շքանշանով:

Մեծարգո պարոն Հաճյան, վերստին բարձր գնահատելով Ձեր երկարամյա ծառայությունները մեր Սուրբ Եկեղեցուն, վաստակաշատ բեղուն աշխատանքը գրականության եւ մանկավարժության անդաստաններում՝ գոհունակ սրտով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատվո բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղոթում ենք, որ Ամենակալն Աստված պարգևի Ձեզ քաջառողջ կյանք, ստեղծագործական նորանոր ներշնչումներ ու երկնաշնորհ հաջողություններ Ձեր անձնդիր գործունեության մեջ: Թող Տերը զորացնի համայն հայությանը, պահի ու պահպանի Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո եւ առաջնորդի ազգանվեր, մեծարժան գործերի:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեան. ամէն:

Այնուհետ Նորին Սրբությունը մասնակցեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Բուենոս Այրեսի մասնաճյուղի 100-ամյակին նվիրված տոնական հանդիսությանը: Վեհափառ Հայրապետը, իր շնորհավորանքները բերելով, իր խոսքում մեծապես կարեւորեց ազգային-եկեղեցական կյանքում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության սպանձնած առաքելությունը.

«Սիրելի հավատավոր հայորդիներ,

Ձեզ հետ հանդիպման եւս մեկ հիշարժան առիթ է ներկայացել Մեզ այսօր, երբ տոնում ենք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Բուենոս Այրեսի մասնաճյուղի 100-ամյակը: Մեծ իրադարձություն է այս հոբելյանը, որ պարզում է մեր առջեւ Բարեգործականի պանծալի ուղին ազգային մեր կյանքում եւ վաստակը նրա մասնաճյուղերի, որոնք, որպես պտղաբեր ոստեր, իրենց բարի արգասիքներն են պարգեւում աշխարհասփյուռ հայ կյանքի մեջ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության անդամները մեր ժողովրդին ծառայել են հավատավոր հոգով, սիրով ու նվիրումով՝ առաքելական պատվերի համաձայն, թէ՝ «մի՛ մոռացեք բարեգործությունը եւ ձեր ունեցած բարիքներին միմյանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի՛ պատարագներն են հաճելի Աստծուն» (Եբր. ԺԳ 16): Նրանց առաջնորդել են աշխարհասփյուռ հայության հոգսերը կիսելու, ազգային կյանքը զորավոր պահելու նպատակները, մեր ժողովրդի լուսավոր գալիքի հեռանկարները, որոնց կյանքի կոչմանը մասնակցել են իրենց սրտաբուխ նվիրատվություններով, ազնիվ ջանքերով ու ամեն սատարումով»:

Նորին Սրբությունը, անդրադառնալով նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Բուենոս Այրեսի մասնաճյուղի նվիրյալ գործունեությանը, ի մասնավորի ասաց. «Ահա այսօր մեկդարյա գործունեության ծանրաբեռն վաստակով իր հարյուրամյա հոբելյանն է տոնախմբում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Բուենոս Այրեսի մասնաճյուղը, որը զգալի ներդրում ունի Արգենտինայի հայ համայնքի ձեւավորման ու բարօրության, Արգենտինայի Հայոց թեմում հոգեխնամ առաքելության կազմակերպման գործընթացներում: Նշանակալի են նաեւ Բուենոս Այրեսի մասնաճյուղի ներդրումն ու ջանքերը կրթական ասպարեզում, որի շնորհիվ մանուկ ու պատանի հայորդիներ հայեցի կրթություն ու դաստիարակություն են ստանում, հաղորդ դառնում մեր պատմությանը եւ աճում ու զորանում սիրո եւ հավատարմության մեջ՝ հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին եւ սրբազան մեր արժեքները: Այսօր դուք, սիրելիներ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության երախտարժան հիմնադիրների բարի օրինակով, ազգասեր ու եկեղեցան-

վեր ոգով նորանոր հաջողություններ եք ավելացնում Միության բազում ձեռքբերումներին՝ նոր խանդավառությամբ ու տեսիլքով շարունակելով նրա առաքելությունը»:

Գնահատարժան գործունեության համար Վեհափառ Հայրապետը պարգևների արժանացրեց Բարեգործականի Բուենոս Այրեսի մասնաճյուղի անդամների. Տիար Ռոբերթո Մալխասյանը եւ Տիկին Ռոսիթա Յուսուֆյանը Նորին Սրբության կողմից պարգևատրվեցին Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շքանշաններով, իսկ տիար Հարություն Սարաֆյանը՝ Սուրբ Ներսես Շնորհալի շքանշանով:

Մայիսի 15-ին Բուենոս Այրեսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում Նորին Սրբությունը Հայրապետական պատարագ մատուցեց՝ ի ներկայության բազմաթիվ հավատացյալների, ՀՀ դեսպան տիար Վլադիմիր Կարմիրշալյանի, Քույր եկեղեցիների ներկայացուցիչների:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եթե լույսի մեջ ենք քայլում, ինչպես որ Ինքն է լույսի մեջ,
հաղորդության մեջ ենք լինում միմյանց հետ» (Ա Յովհ. Ա 7):

Սիրելի հավատավոր զավակներ Մեր,

Հարուցյալ մեր Տիրոջ շնորհապարգեւ լույսն է թեւածում այսօր մեր հոգիներում, երբ Հայրապետ եւ հոտ համախմբվել ենք Սուրբ Պատարագի՝ Կարմիր կիրակիի խորհրդով:

Մեր հայրերը այսպես են բնութագրել Սուրբ Զատիկին հաջորդող երկրորդ կիրակին՝ հիշատակելու համար այն փառավոր իրողությունը, որ Քրիստոսի զոհագործությամբ փրկագնված մարդկությունը եւ Փրկչի հաստատած Եկեղեցին ծաղկում եւ զորանում են Տիրոջ կենարար Արյամբ: Մարդկության համար հեղված տերունական Արյունը ոռոգում է Եկեղեցին, որ պտղաբերում է հավատավոր գործերով՝ ի փառս Աստծո, ի մխիթարություն հավատացելոց: Կարմիր կիրակիի անունը խորհրդանշում է նաեւ արյունը մարտիրոսների եւ նահատակների, որ չուրացան Քրիստոսին եւ փրկության շնորհով արժանացան երկնից արքայության անթառամ լուսեղեն պսակներին: Հավատարմության եւ անձնազոհության այդպիսի հունդերից ծնունդ առավ նաեւ մեր Սուրբ Եկեղեցին, եւ Տիրոջ լույսը, երկնքից հեղվելով հայրենի հողին, նախագծեց Հայ Եկեղեցու հոգեւոր սրբազան կենտրոնը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնը, որի ամենահաս բյուր օրհնությունները սփռվում են հայության կյանքից ներս աշխարհի չորս ծագերում: Միածնի լույսը շողարձակեց կենդանի նահատակ Սուրբ Գրիգոր Լուսավորչի կանթեղում, որից պայծառ ճառագում է հայոց տերունաշնորհ հավատքը: Առաքյալն ասում է. «Եթե լույսի մեջ ենք, ինչպես որ Ինքն է լույսի մեջ, հաղորդության մեջ ենք լինում միմյանց հետ»: Սուրբ Գիրքը լույս է կոչում նաեւ հավատքից բիսած ապրվածահաճո գործերը, սերն ու խաղաղությունը, համերաշխությունն ու միմյանց հանդեպ եղբայ-

բական վերաբերմունքը: Երբ այս լույսի մեջ ենք, նաեւ բարի հաղորդության մեջ ենք լինում միմյանց հետ, քանզի լույսն իր բնությամբ իր մեջ չի ամփոփվում, այլ տարածվում է լուսավորելու այլոց: Մեր ժողովրդի զավակները լուսազգյաց միշտ ամուր են պահել միմյանց միջեւ հաղորդությունը սպարումի եւ զորակցության ոգով, մեկմեկու օգնելու ասպվածահաճո գործերով: Այսպես էր, որ նոր ժամանակներում մենք համազգային միասնականությամբ կյանքի կոչեցինք մեր նվիրական երազանքները՝ Արցախյան ազատամարտի հաղթանակը, հայրենի պետականության վերահաստատումը, ազգային անդաստանում ձեռքբերումներն ու հաջողությունները, հոգեւոր-եկեղեցական կյանքի առաջընթացը: Սփյուռքի հայորդիք աղոթքներով ու նախանձախնդիր աջակցություններով սատար եղան Հայրենիքում իրագործվող կարեւոր ծրագրերին, Մայր Աթոռի առաքելությանը, որոնց մեջ ձեր որդիական սիրով կարեւոր ավանդ ունեք դուք՝ հարազատ զավակներ մեր Եկեղեցու: Հաղորդության, միմյանց հանդեպ սիրո այսպիսի լուսեղեն գործերը վերացնում են սահման եւ հեռավորություն, շաղկապում են մեր ժողովրդին աշխարհի բոլոր կողմերում եւ դարձնում շնորհընկալը տերունական պարգեւների, ինչպես որ իր խոսքը եզրափակում է սուրբ առաքյալը. «Եթե լույսի մեջ ենք, ինչպես որ Ինքն է լույսի մեջ, հաղորդության մեջ ենք լինում միմյանց հետ, եւ նրա Որդու՝ Հիսուսի արյունը մաքրում է մեզ ամեն մեղքից»: Այս կիրակին, որ ի սեր աշխարհի ասպվածորդու զոհաբերության եւ հանուն հավատքի մարտիրոսների անձնազոհության խորհուրդն ունի, մեզ բերում է հոգեւոր մարտը մղելու անարյուն մարտիրոսության գաղափարը: Քրիստոսի վկաները մարտիրոսանում էին հալածանքների շրջանում, իրենց կյանքը հոժարակամ դարձնում պատվար քրիստոնեության դեմ հարձակումների: Մենք մեր կյանքով, մեր գործերով պիտի վկայենք Տիրոջ ներկայությունը իր Սուրբ Եկեղեցում, որի անդամներն ենք: Հայրապետիս համար ուրախություն եւ քաջալերություն է, սիրելի զավակներ Մեր, որ հավատքը, եկեղեցասիրությունն ու ազգանվիրումը զորեղ են ձեզանում եւ գեղեցկորեն արտահայտվում են համայնքային ձեր կազմակերպված կյանքի մեջ, սրբազան մեր արժեքների հանդեպ ձեր հարգանքով ու հավատարմությամբ: Այս ոգին պիտի արմատավորեք նաեւ ձեր զավակների ներաշխարհում, որպեսզի նրանք էլ քայլեն լույսի մեջ, հաղորդակից ու զորակից լինեն մեկմեկու, մասնակից մեր Սուրբ Եկեղեցու, մեր Հայրենիքի կյանքին:

Սիրելիներ, մենք, իբրեւ Քրիստոսի արյամբ հաստատված Սուրբ Եկեղեցու անդամներ, պարտավորությունն ունենք հավատի հոգեւոր մարտը, մեր հայրերի սրբազան ավանդները, մեր ազգային մշակույթը շարունակելու նաեւ մեր սերունդների միջոցով: Դարեր շարունակ հայ ավանդության կրողը մեզ համար եղել է եւ է առաջին հերթին ընտանիքը: Արդ, սիրելի հայորդիներ, ընտանեկան նվիրական հարկի ներքո մայրենի լեզվով, հայրենյաց սիրով կրթելով ձեր որդիներին՝ նրանց ուղղորդեք դեպի եկեղեցի եւ հայ դպրոց, որտեղ պիտի աճեն ու զորանան նրանց հոգու նախանձախնդրությունը եւ անպարտելի սերը առ ազգն ու Եկեղեցին: Դատմության քառուղիներում, հայկական պետականության բացակայության պայմաններում ընտանիքը եւ եկեղեցին եղել են մեր ժողովրդի միակ ապաստարանը, այն ապառաժ վեմը, որի վրա հիմնվել եւ գոյատեւել է մեր ժողովուրդը, վեմը, որի վրա անխորտակելի խարսխված է փարոսը հայ կյանքի՝ հավատո մշտավառ կանթեղը Լուսավորչի: Այսօրվա մեր ազատ եւ անկախ Հայաստանում, նաեւ Սփյուռքում, հայության առջեւ ծառացած բազում խնդիրներին եւ մարտահրավերներին ընդառաջ մենք պետք է հավատա-

վոր կյանքով ու գործերով մշտավառ պահենք մեր Եկեղեցու լույսը՝ ազգային-եկեղեցական անդաստանում սերմանելով առ Աստված հավատի ու հայրենյայց սիրո կենսատու սերմերը, դրանք ոռոգելով որդիական ամբողջանվեր հոգածությամբ:

Սիրելի բարեպաշտ զավակներ Մեր, այս նվիրական պահին մեր երախտագիտության խոսքն ենք ուզում արտահայտել հանդեպ Արգենտինայի իշխանությունները եւ նրա եղբայրասեր ժողովուրդը, այն բոլոր բարիքների համար, որ Հայ Եկեղեցին եւ իր հավատացյալները վայելում են այստեղ: Աղոթում ենք, որ Աստված հավետ խաղաղ ու շեն պահի այս հյուրասեր պետությունը՝ նաեւ համայն աշխարհին շնորհելով խաղաղություն ու բարօրություն:

Մեր օրհնությունն ենք վերստին բերում ձեզ բոլորիդ՝ սիրելի Գիսակ Սրբազան, թեմական խորհրդի հարգարժան անդամներ եւ հավատավոր ու բարեպաշտ մեր զավակներ: Ձեզ հոգեւոր ուժ եւ կորով, որպեսզի կանգուն, անսասան եւ առավել ծաղկյալ պահեք ձեր քրիստոնեական հավատքը, Արգենտինայի տիրահնամ Հայոց թեմը:

Թող Բարձրյալ Տերն օրավուր զորացնի համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդին, եւ օրհնի բոլոր ջանքերը՝ լուսառատ դարձնելու գալիքը հայության, բարգավաճ՝ Հայրենի մեր երկիրը եւ միշտ պայծառ՝ Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Շնորհք, սեր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեան այժմ եւ յաւիտեանս. ամէն:

Պատարագի ընթացքին եկեղեցանվեր գնահատելի գործունեության եւ ազգաշահ վաստակի համար արժանավոր հայորդիներ Վեհափառ Հայրապետի կողմից պարգեւատրվեցին պատվո շքանշաններով: Նորին Սրբությունը Սուրբ Ներսես Շնորհալի շքանշան հանձնեց Արգենտինայի Հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ տիար Ալբերտո Ճերեճյանին, Վահան սարկավագ Պերպերյանին, տիար Խորխե Մյուրեքյանին, տիարք Գրիգոր Հայրապետյանին եւ Ռուբեն Մոգյանին շնորհվեց Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շքանշան: Վեհափառ Հայրապետը պանակե նվիրեց թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանին՝ գնահատելով Սրբազան Հոր տասնամյակների վաստակն ու հոգեւոր ծառայությունը, ինչպես նաեւ Մայր Աթոռից բերված սկիհ ընծայեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն: Պատարագի ավարտից հետո տեղի ունեցավ մատաղաճաշ, որին ներկա էին հարյուրավոր հայորդիներ: Ճաշի ընթացքում Նորին Սրբությունը Հայրապետական Օրհնության գրեր շնորհեց տիարք Սամո Սարգիսյանին, Փետրոս Մուրադյանին եւ տիկին Դիանա Տեր-Կարապետյանին: Նորին Սրբությունն այցելեց նաեւ Սարդարապատ հրատարակչատուն, այնուհետ Սարդարապատի ճակատամարտի հերոսներին նվիրված հուշակոթողի մոտ աղոթեց հերոսական ճակատամարտում զոհվածների հոգվոց խաղաղության համար:

Մայիսի 16-ի առավոտյան Հայոց Հայրապետն այցելեց Բուենոս Այրեսի քաղաքային գբոսայգի, որտեղ հայորդիների կողմից Արգենտինային նվիրված խաչքարի մոտ աղոթեց խաչքարի կանգնեցման նախաձեռնությունն իրականացրած Գեորգ եւ Վերա Կարագոզյանների հոգիների հանգստության համար: Այնուհետ Նորին Սրբությունն ուղեւորվեց Հայկական գերեզմանատուն: Գերեզմանատան մատուռում, ի ներկայության

հավատավոր հայորդիների, Հայրապետը հոգեհանգստյան աղոթք կատարեց, որից հետո մատուռից քիչ հեռու կանգնեցված Հայոց Ցեղասպանության զոհերի հուշարձանին ծաղկեպսակ զետեղեց եւ աղոթեց Ցեղասպանության նահատակների հոգվոց խաղաղության համար: Նույն օրը Նորին Սրբությունն այցելեց ազգային բարերար Էդուարդո Էօրնեքյանին եւ կատարեց տիար Էռոնեքյանի նոր տան եւ տան բակում կանգնեցված խաչքարի օրհնության արարողությունը՝ բարձր գնահատելով բարերարի ազնիվ ոգին եւ մեծ ներդրումները ազգային-եկեղեցական կյանքի առաջընթացի ու զարգացման գործում:

Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ նաեւ Արգենտինայի Ազգային կոնգրեսի Պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների եւ պաշտպանության մշտական հանձնաժողովի նախագահ Ալֆրեդո Աթանասոֆի, Սահմանադրական դատարանի նախագահ Ռիկարդո Լորենսետտիի եւ փոխնախագահ Էլենա Հայտրն դե Նոլասկոյի հետ: Արգենտինայի արտաքին գործերի նախարարությունում, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպվել էր ընդունելություն, որին մասնակցում էին դիվանագիտական առաքելությունների շուրջ երկու հարյուր ներկայացուցիչներ: Հանդիսության ընթացքում Վեհափառ Հայրապետը հռչակվեց Արգենտինայի կառավարության պատվո հյուր: Նորին Սրբությունն այս պատիվը առաջին հերթին գնահատանք նկատեց Արգենտինայի հայ համայնքին իրենց օրինավոր եւ արդյունաշատ կյանքի համար այս երկրում եւ գոհունակությամբ անդրադարձավ Արգենտինայում իշխանությունների կողմից կրոնական գործունեության համար բարենպաստ պայմանների եւ հնարավորությունների ապահովմանը, որով Քույր եկեղեցիներն Արգենտինայում համերաշխությամբ եւ համագործակցությամբ իրականացնում են իրենց առաքելությունը: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Արգենտինայի նախագահ տիկին Քրիստինա Կիրշների հետ: Հանդիպմանը ներկա էին Արգենտինայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը, ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Վլադիմիր Կարմիրշալյանը, տիար Էդուարդո Էօրնեքյանը, Արգենտինայի արդարադատության նախկին նախարար եւ պետական բարձր պաշտոններ զբաղեցրած տիար Լեոն Կառլոս Ասլանյանը, Արգենտինայի Հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ տիար Ալբերտո Ճերեճյանը: Հանդիպմանը Նորին Սրբությունը ցավակցություն հայտնեց նախագահ Քրիստինա Կիրշներին նրա ամուսնու՝ Արգենտինայի նախկին նախագահ Նեստոր Կիրշների մահվան կապակցությամբ, ում հետ Վեհափառ Հայրապետը հանդիպել էր Արգենտինայի Հայոց թեմ իր առաջին Հովվապետական այցելության ընթացքում: Հայոց Հայրապետը գնահատանքով անդրադարձավ Արգենտինայի Խորհրդարանի եւ Սենատի կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը, գոհունակություն հայտնեց նախագահին Արգենտինայի հայ համայնքի վերաբերյալ գնահատանքի խոսքերի համար:

Վեհափառ Հարապետի Հովվապետական այցելությունը Բուենոս Այրես ավարտվեց մշակութային միջոցառմամբ՝ Թեատրո Ավենիդաե օպերային թատրոնում: Հանդես եկան հայ եւ արգենտինացի կատարողներ, երգչուհիներ եւ արվեստագետներ: Հանդիսության ընթացքում Նորին Սրբությունը, իր խոսքն ուղղեց ներկաներին եւ բարձր գնա-

հատելով արգենտինահայ ազգային բարերար տիար Էդուարդո Էօրնեքյանի բարեգործությունները, ազգային եւ եկեղեցական անդասպանում զգալի ներդրումները, հայրենական կյանքի զարգացման ու առաջընթացին ի խնդիր բերած մեծ նպաստն ու գործերը՝ նրան հռչակեց Սուրբ Էջմիածնի ասպետ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Բուենոս Այրես նահանգի մեծարգո նահանգապետ Տիար Դանիել Սիոլի,

Հարգարժան դեսպան Հայաստանի Հանրապետության Տիար Վլադիմիր Կարմիրշալյան

Հարգարժան պետական այրեր,

Մեծարգո դեսպաններ եւ դիվանագետներ,

Մշակութի պատվարժան գործիչներ եւ հյուրեր,

Սիրելի հավատավոր ժողովուրդ,

Ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ ամենքիդ:

Ուրախ ենք հանդիպելու ձեզ շքեղաշուք, արվեստաշունչ այս սրահի կամարների ներքո:

Մեր այցելության օրերին մխիթարություն եւ քաջալերություն ապրեցինք՝ վերստին տեսնելով հավատավոր մեր ժողովրդի իրագործումներն ու ձեռքբերումները Արգենտինայում: Կազմակերպված համայնքային կյանքը, խնամված եկեղեցիներն ու ազգային հաստատությունները, նոր սերունդ կրթող վարժարանները, ազգօգուտ եւ եկեղեցաշեն գործերը վկայությունն են ձեր եկեղեցանվիրումի, մշտարթուն ազգասիրության ու հայրենասիրության, սիրելի հայորդիներ: Մեզ համար մեծ ուրախություն է, որ դուք, նշանակալի մասնակցություն եւ ավանդ եք բերում ինչպես Արգենտինայի հասարակական կյանքի տարբեր ասպարեզներում, նույնպես եւ՝ մշակութային կյանքում՝ վայելելով հարգանքը, վստահությունն ու գնահատանքը Արգենտինայի ժողովրդի եւ իշխանությունների: Մեր ժողովուրդը, որ ունի մշակութային հարուստ ավանդներ եւ սիրով ու խնամքով պահպանում է դրանք, գիտի նաեւ հարգել ու գնահատել այլ ժողովուրդների մշակույթը, արվեստն ու ավանդները: Արդարեւ, մեր կյանքի մեջ բարձր ու վեհ հոգեւոր ու բարոյական հավերժական արժեքները զորանում են նաեւ ճշմարիտ արվեստով:

Սիրելիներ, զոհունակ սրտով պիտի վերադառնանք Հայաստան, մեր հավատի քրիստոսահիմն կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, քանզի գիտենք, որ դուք, զավակներդ հայոց, արդեն չորրորդ-հինգերորդ սերունդը Արգենտինայում, ձեր հայրերի օրինակով ամեն ջանք պիտի գործադրեք պահպանելու եւ զարգացնելու համար հայ մշակույթը, մայրենի լեզուն, գիր-գրականությունը եւ պայծառ պահելու հայ դպրոցն ու եկեղեցին, որ սնում են հոգեւոր եւ ազգային ձեր կյանքը:

Մեր բարձր գնահատանքն ենք բերում այս հանդիսության կազմակերպիչներին, ինչպես նաեւ մշակույթի եւ արվեստի ոլորտի ներկայացուցիչներին, ովքեր իրենց բարձրար-

«Սուրբ Էջմիածնի ասպետ» շքանշան Էդուարդո Էօրնեքյանին

վեստ կատարումներով եւ գեղեցիկ ելույթներով խնդություն եւ բավականություն պիտի բերեն մեր հոգիներին:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված խաղաղ երկնքի ներքո պահի ու պահպանի Արգենտինայի Հանրապետությունն ու ժողովրդին, օրհնի այն բոլոր ջանքերը, որոնք ի գործ են դրվում մեր երկրների ու ժողովուրդների միջեւ բարեկամության ու եղբայրության ամրապնդմանը:

Հայցում ենք նաեւ, որ Տերը ամենախնամ Իր Սուրբ Աջով միշտ հովանի լինի Արգենտինայի ողջ հայությանը, խաղաղ ու բարօր պահպանի մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ պարգեւի բարգավաճում մեր Հայրենիքին, առավել պայծառություն՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Սիրելիներ, այսօր ուրախություն է Մեզ համար վերստին բարձր գնահատանքով անդրադառնալ ազգային բարերար Տիար Էդուարդո Էօրնեքյանի ազգօգուտ եւ հայրենանվեր գործունեությանը: Արժանավոր հայորդին իր բարեպաշտ հոգու ջերմ նվիրումով տարիներ շարունակ ներդրում է բերում մեր ազգային-եկեղեցական կյանքի պայծառությանը: Նրա բարերարությունների շարքում են Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու զանգակատան կառուցումը, «Էօրնեքյան» դպրոցի հիմնադրումը Սուրբ Էջմիածնի հովանու ներքո, մեծագնիվ նվիրաբերումները ի նպաստ Մայր Աթոռի առաքելության, ինչպես եւ՝ Սփյուռքում եկեղեցաշեն եւ կրթական ծրագրերի հովանավորությունները: Հայաստանում կատարած մեծ ներդրումներով գյուղատնտեսության, բանկային, փոստային հաղորդակցության ոլորտներում, «Զվարթնոց» օդանավակայանում տիար Էորնեքյանը մեծ ավանդ է բերում մեր Հայրենիքի տնտեսական առաջընթացին, մեր ժողովրդի բարօրությանը: Եկեղեցասեր, ազգանվեր ու հայրենաշեն բազում իրագործումները մեր Եկեղեցու արժանավոր զավակին իրապես դասում են մեծագործ հայ երախտավորների շարքում: Ի գնահատություն մեծ վաստակի եւ ծառայությունների՝ այսօր սիրելի Էդուարդո Էօրնեքյանին քաջառողջ կյանք, եռանդ ու կորով եւ աստվածպարգեւ նոր հաջողություններ բարեմաղթելով, անհուն ուրախությամբ հռչակում ենք

Ս Ո Ի Ր Բ Է Ջ Մ Ի Ա Ծ Ն Ի Ա Ս Պ Ե Տ

եւ նրա կուրծքը զարդարում պատվո շքանշանով:

Թող Տիրոջով զորացած բարերար ու մարդասեր սրտերն ու գործերը երբեւէ չպակասեն մեր կյանքից:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենենսեան. ամեն:

***

Մայիսի 19-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժամանեց Կորդոբա, որն իր մեծությամբ երկրորդ քաղաքն է Արգենտինայում: Նորին Սրբությանը դիմավորեցին թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը, Կորդոբայի հոգեւոր

հովիվ Արժանապատիվ Տ. Երեմիա քահանա Խաչատրյանը, եկեղեցական վարչության անդամներ, համայնքի ներկայացուցիչներ, հավատացյալներ: Հրաշափառի արարողություն տեղի ունեցավ Կորդոբայի Սուրբ Գեւորգ եկեղեցում, որը Հարավային Ամերիկայի առաջին հայկական եկեղեցին է՝ կառուցված 1926 թ.: Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել նաեւ Քույր եկեղեցիների ներկայացուցիչներ: Հավատացյալները մեծ խանդավառությամբ դիավորեցին Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունը եկեղեցական հանդիսավոր թափորով շարժվեց դեպի եկեղեցի: Հրաշափառի արարողության ընթացքում Նորին Սրբությունը հավատացյալներին ուղղված խոսքում ասաց.

«Սիրելի հավատավոր զավակներ Մեր,

Այսօր գոհաբանական աղոթք ենք մատուցում Ամենակալ Տիրոջը, որ Մեզ վերստին շնորհը պարգեւեց ձեզ այցելելու: Փառավորյալ է Աստված, քանզի իր անքնին կամքով է, որ համախմբված ենք այս սուրբ եկեղեցում՝ միասնաբար աղոթք վերառաքելու ամենագութ Տիրոջը: Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք բերել ձեզ, նվիրական Մայր Աթոռից ճառագող լույսը, որ միավորում է Արգենտինայում եւ ի սփյուռս ապրող ազգիս զավակներին, զորացնում հավատքի մեջ, մեր հայրենիքի եւ սրբազան մեր արժեքների հանդեպ նվիրումի եւ հավատարմության մեջ:

Հովվապետական Մեր անդրանիկ այցից տարիներ անց վերստին եկել ենք դեպի Հարավային Ամերիկայի հայ գաղթօջախները: Այսօր ուրախ սրտով ձեզ հետ ենք, Կորդոբայի Մեր սիրելի, գովարժան զավակներիդ հետ: Առաջին Մեր այցելության ընթացքում Մենք առավել քաջատեղյակ դարձանք համայնքում կատարվող աշխատանքներին, ազգային-եկեղեցական կյանքի շինության ու բարօրության համար ձեր կողմից իրականացվող ձեռնարկներին, առկա դժվարությունները դիմագրավելու եւ նոր ձեռքբերումներ արձանագրելու ձեր ջանքերին: Այսօր ուրախ ենք վերստին տեսնելու Կորդոբայի համայնքը հավատքով արթուն, հայաշունչ եւ հայրենաշունչ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ սիրով լեցուն: Ձեր եկեղեցասիրությամբ, նախանձախնդրությամբ ու նվիրումով ազգաշահ ու եկեղեցանպաստ նորանոր արարումներ են կյանքի կոչվում համայնքում, եւ երկնաշնորհ հաջողությամբ են պսակվում ազգային-եկեղեցական կյանքի առաջընթացին ուղղված ձեր ջանքերը, քանզի հավատավոր գործերի վրա են իջնում Աստծո օրհնությունները:

Սիրելիներ, բոլոր ժամանակների համար մեր հայրերը հնչեցրել են մեր ժողովրդին ուղղված պանծալի վկայությունը հայոց լույս հավատքի. «Հայր մեր, զՍուրբ Աւետարանն գիտեմք, եւ մայր՝ զԱռաքելական Սուրբ Եկեղեցի»: Արդարեւ, չկա հայ հոգին առանց քրիստոնեական մեր հավատքի: Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցին է, մեր հայրերի հավատքն է, որ մինչեւ այսօր համախմբում, զորացնում եւ միավորում է ազգիս զավակներին, ուր էլ որ լինեն: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին է, որ մեր ժողովրդի զավակներին հայ է պահել դարեր շարունակ: Դժվարությունների ու փորձությունների դեմ պայքարած եւ հաղթանակած մեր սուրբ հայրերի օրինակն է, որ ոգեշնչել է ու շարունակում է քաջալերել մեր ժողովրդին: Սուրբ Էջմիածնի լույսն է, որ հավատն ու լավատեսությունը վառ է պահել հոգիներում Մեր զավակների, նրանց առաջնորդել նոր արարումների ու նոր հաղթանակների, ինչպես Հայրենիքում, այնպես էլ հայորդիների համար երկրորդ հայրենիք հանդիսացող երկրներում:

Տաղկիսուն Դրամմամբ վրժանման յուսիվանդոց

Արգենտինայի օրինյալ հողում արժանի հարգանք եւ վստահություն են գտել ձեր պապերն ու հայրերը իրենց ստեղծագործ կյանքով ու արդար վաստակով, իրենց հարգանքով Արգենտինայի ժողովրդի արժեքների ու ավանդույթների հանդեպ: Ձեր շահեկան մասնակցությամբ Արգենտինայի հասարակական կյանքում դուք շարունակում եք վայելել Արգենտինայի իշխանությունների ու աստվածասեր ժողովրդի բարեհաճությունը եւ աջակցությունը: Դուք ճանաչելի եք դարձնում հայությունը եւ կամրջում եք Արգենտինայի հետ մեր Հայրենիքի բարեկամությունը:

Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունները, Սուրբ Էջմիածնի լույսն ու սերն ենք բերում ձեզ ամենքիդ: Մեր գնահատանքն ենք հայտնում Կորդոբայի հոգեւոր հովիվ Տ. Երեմիա քահանա Խաչատրյանին, Կորդոբահայ գաղութային վարչությանը եւ նրանց աջակից հավատավոր հայորդյաց, որ զովելի ջանքեր են ներդնում համայնքում հոգեւոր-եկեղեցական կյանքը աշխույժ եւ զորեղ պահելու համար: Մեր հորդորն ու պատգամն է մեր ժողովրդի սիրասուն զավակներիդ, որ շարունակեք համախմբված մնալ Հայ Եկեղեցու շուրջ, միասնական, ազգասիրությամբ ու եկեղեցասիրությամբ լեցուն:

Առ Աստված Մեր աղոթքն է, որ Բարերար Տերն օրհնի Արգենտինայի Հանրապետությունն ու այս երկրի բոլոր բնակիչներին, առատացնի Իր օրհնությունները մեր ժողովրդի համազգային կյանքում եւ Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահի ու պահպանի Կորդոբայի հայ համայնքը:

Աստուած յուսով լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Արարողությունից հետո եկեղեցուն կից Հայոց Ցեղասպանության հուշարձանի մոտ Վեհափառ Հայրապետն աղոթեց Ցեղասպանության նահատակների հոգիների խաղաղության համար: Այնուհետեւ եկեղեցու հանդիսությունների սրահում տեղի ունեցավ գեղարվեստական միջոցառում, հուզիչ եւ գեղեցիկ կատարումներով հանդես եկան Կորդոբայի հայ համայնքի մանուկ եւ պատանի հայորդիներ: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց կազմակերպված միջոցառման առիթով եւ մաղթեց, որ Տերն անսասան պահի հավատն ու հույսը, լավատեսությունը, նոր ձեռքբերումների վճռականությունը հայորդյաց սրտերում՝ շեշտելով նաեւ մշակութային միջոցառումների կարեւորությունը նոր սերնդին ազգային ոգով կրթելու եւ սնուցելու գործում:

Մայիսի 20-ի առավոտյան Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Կորդոբայի նահանգապետ Խուան Իսկիարետիին: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց ջերմ ընդունելության համար, մեծապես գնահատեց Կորդոբա նահանգի եւ Արգենտինայի կառավարության կողմից երկրի ավանդույթների պահպանության գործում դրսեւորած նախանձախնդրությունը, որն օրինակ է նաեւ հավատավոր հայորդիներին՝ պահպանելու իրենց ազգային ավանդությունները, հավատարիմ մնալու հայրենի ժառանգությանն ու արժեքներին: Նահանգապետը նշեց, որ մեծ է Կորդոբայի հայ համայնքի դերակատարությունը Կորդոբայի քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային կյանքում: Խոսելով Հայոց Ցեղասպանության մասին՝ նահանգապետը տեղեկացրեց, որ Արգենտինայի կրթական համակարգում կարեւորվում է Հայոց Ցեղասպանության մասին

ուսուցանումը, որպեսզի նոր սերունդը, իմանալով մարդկության դեմ գործված ոճրագործությունների մասին, կրթվի եւ դաստիարակվի մարդկության կյանքում խաղաղության, համերաշխության ու եղբայրության հաստատման վճռականությամբ: Ամենայն Հայոց Հայրապետը կարեւոր նկատեց պատմության ուսուցումը ճշմարտության ու արդարության սկզբունքներով, որով նոր սերունդը պիտի ավելի նախանձախնդիր լինի մերժելու չարիքն ու բռնությունը մարդկության կյանքից եւ ջանքեր ներդնելու՝ ի խնդիր առավել լավ ու բարօր աշխարհի կառուցման: Այնուհետեւ Նորին Սրբությունը հանդիպեց Կորդոբայի քաղաքապետ Դանիել Ժակոմինոյին: Պաշտոնական ընդունելության ընթացքում քաղաքապետը Վեհափառ Հայրապետին նվիրեց քաղաքի հիմնադիր Խերոնիմո Լուիս դե Կաբրերայի արձանիկը եւ հանձնեց վկայագիր, որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը հռչակվում է Կորդոբա քաղաքի պատվո հյուր:

Նույն օրը Հայրապետն այցելեց Սուրբ Սահակ-Մեսրոպ ազգային վարժարան, հանդիպումներ ունեցավ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կորդոբայի մասնաճյուղի վարչական անդամների, ՀՅԴ «Անդրանիկ» ակումբի անդամների հետ: Երեկոյան տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Կորդոբայի քաղաքապետը, Քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, բազմաթիվ հավատացյալներ: Ճաշի ընթացքում Վեհափառ Հայրապետը խոսք ուղղեց հավատացյալներին՝ ասելով. «Մենք եկեղեցիներ ենք կերտել ամենուր մեր կյանքում, եւ Աստծո շնորհով մենք եկեղեցիացել ենք որպես ազգ: Ու թեեւ պատմության ընթացքին տեսել ենք եկեղեցի ավերող բարբարոսներ, բայց մեր հոգում Աստծո էջքով կառուցված եկեղեցին հնարավոր չի եղել քանդել, եւ այդ եկեղեցուց ճառագել է մեր հավատքը, որով մենք կերտել ենք նոր եկեղեցիներ, հայ դպրոց, մշակույթ, անսասան ու հաղթական ոգի: Թող Աստված միշտ լինի ձեզ հետ, եւ դուք ձեր հավատո գործերով արժանանաք մեր հայրերի «երանի եկեղեցի շինողաց» մաղթանքին ու շարունակեք կերտել պայծառությունը մեր եկեղեցու ազգաշինության եւ հայրենաշինության բարի գործերով»: Վեհափառ Հայրապետը, գնահատելով համայնքի հոգեւոր հովիվ Տ. Երեմիա քահանա Խաչատրյանի ծառայությունը՝ նրան պարգեւատրեց քահանայական լանջախաչով:

***

Մայիսի 21-ի վաղ առավոտյան Ամենայն Հայոց Հայրապետն ուղեւորվեց Չիլի եւ ժամանեց Չիլիի մայրաքաղաք Սանտյագո, որտեղից ուղեւորվեց Վալպարաիսո՝ մասնակցելու Չիլիի Ազգային ժողովի նիստին: Նիստի ընթացքում Չիլիի պետական տոնի՝ Նավատորմի փառքի օրվա առիթով նախատեսված էր երկրի նախագահ Միգել Խուան Պիներայի ելույթը: Չիլի Հովվապետական այցի ընթացքում Նորին Սրբությանն ուղեկցում էին նաեւ Արգենտինայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը, թեմական խորհրդի ատենապետ տիար Ալբերտո Ճերեճյանը, ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Վլադիմիր Կարմիրշալյանը եւ Չիլիում ՀՀ պատվո հյուպատոս Էդուարդո Ռոդրիգեզ Գուարաչին: Ազգային ժողովի հանդիսավոր նիստից հետո Նորին Սրբությունը մասնակցեց տոնական շքերթին, որից հետո հանդիպեց Չիլիի նախագահին: Երեկոյան

Սանտյագոյում Վեհափառ Հայրապետը «Ինտերկոնտինենտալ» հյուրանոցի հանդիսությունների սրահում հանդիպեց Չիլիի հայ համայնքի հավատացյալների հետ: Հանդիպմանը ներկա էին նաեւ Քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, Չիլիի քաղաքական գործիչներ:

Նորին Սրբությունը, դիմելով ներկաներին, ասաց. «Սիրելիներ, Մենք ուրախ ենք այս երեկո մեր հանդիպման համար եւ ողջունում ենք այստեղ ներկայությունը պետական, քաղաքական եւ կրոնական գործիչների, ովքեր եկել են կիսելու մեր հանդիպման ուրախությունը: Նրանց ներկայությունը հարգանքի արտահայտություն է հանդեպ Չիլիի հայորդիները, եւ Մեր սիրելի հայորդիների միջոցով հարգանքի դրսեւորում հանդեպ Հայոց Հայրապետը: Գոհություն է Մեզ համար, որ աշխարհում սփռված հայորդիներն ամենուր, ինչպես եւ այստեղ՝ Չիլիում, արթուն են պահում իրենց հոգիներում լույս հավատքը մեր հայրերի, որ հայոց կյանքում արմատավորվեց քարոզչությամբ Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների»:

Վեհափառ Հայրապետը, կարեւորելով նաեւ համայնքի կապը Հայրենիքի ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, ի մասնավորի ասաց. «Դուք ձեր սրտերում կրում եք Մայր Եկեղեցու եւ Հայրենիքի հանդեպ սերն ու նվիրումը, որոնք մշտարթուն պիտի լինեն Հայրենի երկրի եւ Սուրբ Էջմիածնի հետ ձեր շարունակական կապերով ու հարաբերություններով: Այսօր տեխնոլոգիական նվաճումները, հեռահաղորդակցության միջոցները վերացնում են հեռավորություն ու սահմաններ եւ հնարավորություններ են ստեղծում շփման ու միմյանց հետ հաղորդակցության: Դապը առ Հայրենին ձեզ պիտի ոգեշնչի ու զորություն տա համայնքում հայ կյանքի նոր ծաղկումի ու բարգավաճման համար: Ձեր պատասխանատվությունը մեծ է, քանզի Չիլիում հայոց ապաստանելուց հետո հինգերորդ սերունդն է մեծանում: Այսօր Սփյուռքում կարեւոր մտահոգություն է դառնում հայոց լեզվի, ազգային ինքնության ու գիտակցության պահպանությունը հատկապես նոր սերնդի շրջանում, որ առավելաբար է կրում տվյալ միջավայրի ազդեցությունը: Ձեր հավատավոր ոգին, սերը հանդեպ ազգային ավանդները պիտի փոխանցեք ձեր զավակներին, որպեսզի հետո նրանք նույն նախանձախնդրությամբ զորանան, աշխույժ լինեն եկեղեցական, համայնքային կյանքում: Դուք եւ ձեր որդիները մնացեք հավատարիմ մեր սրբազան արժեքներին, որդիական ջերմ սիրով ու հավատարմությամբ լեցուն հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Նրա լույսը եղեք միշտ՝ հայացքն ուղղած դեպի Սուրբ Էջմիածին եւ Մայր Հայրենիք, որոնցով միավորված մեր ժողովուրդը պիտի տեսնի իր արդար նպատակների իրագործումը: Սիրելի հայորդիներ, մեր ձեռքբերումներն ու հաջողությունները ոգեւորություն ու քաջալերություն են մեզ համար, մեր խնդիրներն ու մարտահրավերները՝ ահազանգ եւ կոչ, միաբանությամբ, միասնական գործունեությամբ դիմագրավելու մեր կյանքում տեղ գտած դժվարությունները, համախումբ ջանքերով լուծում գտնելու, մեկմեկու զորակցելու եւ նեցուկ լինելու: Այս առումով կարեւոր է նաեւ հավատացյալ հայորդիների նախանձախնդիր գործունեությունը, քանզի Առաքելական Սուրբ Եկեղեցու, մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությունը ամենքիս է: Յուրաքանչյուր հայ՝ որպես մի մասնիկը մեր ժողովրդի, գիտակցելով, որ հոգու պարտք ունի ողջ հայության առջեւ, պիտի գործի ոչ միայն անձնական, այլեւ համազգային մեր բարեկեցության եւ բարօրության, մեր ողջ ազգի փրկության համար: Արդ, մեր բազում ազգային նպատակներ, նվիրական իղձեր ու երազանքներ իրականություն կդառնան, երբ

մեր անհատական կյանքը լույս դարձնենք մեր հավաքական կյանքի համար՝ հավատքից բխող առաքելության նոր կենսագործումներով»:

Մայիսի 22-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Սանտյագոյի արքեպիսկոպոս Ռիկարդո Էցցատիի հետ: Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ Հայ Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների սերտ հարաբերություններին՝ կարեւորելով երկու Եկեղեցիների միջեւ եղբայրական գործակցության առավել ամրապնդումն ու արդյունավորումը: Վեհափառ Հայրապետի եւ Սանտյագոյի արքեպիսկոպոսի միջեւ զրույցի ընթացքում նաեւ պայմանավորվածություն ձեռք բերվեց Չիլիի Կաթոլիկ Եկեղեցու աստվածաբանական բարձրագույն կրթական հաստատությունում հայ հոգեւորականի ուսման եւ կեցության վերաբերյալ, որով նաեւ Չիլիի հայ համայնքը, ի դեմս ուսանող հոգեւորականի, կունենա իր հոգեւոր հովիվը: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն այցելեց Սանտյագոյի՝ Հայաստանի Հանրապետության հրապարակ, որտեղ հավատացյալ հայորդիների մասնակցությամբ աղոթք բարձրացրեց Չիլիի հայ համայնքի զորացման եւ համայն հայության ու Մայր Հայրենիքի բարօրության ու առաջընթացի համար: Կաթոլիկ համալսարանի եկեղեցում Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց եկեղեցական արարողություն: Հավատացյալներին ուղղված խոսքում Հայոց Հայրապետն անդրադարձավ խաչի խորհրդին, նշելով, որ Տերունական խաչից բխող կենսատու ուժով է զորացել մեր ժողովուրդը, դիմակայել փորձությունների ու արհավիրքների եւ հաղթահարելով դժվարություններ ու նեղություններ՝ իր մեծ հավատքի շնորհիվ կերտել է նոր կյանք՝ խարսխված ազգային արժեքներին ու սրբություններին: Նորին Սրբությունը տեղեկացրեց նաեւ առաջիկային հայ համայնքին սպասավորության համար Չիլի մեկ հոգեւորականի ծառայության կոչման մասին: Այս լուրը հավատացյալները ողջունեցին բուռն ծափահարություններով: Նույն օրը Հայոց Հայրապետն այցելեց նաեւ Սանտյագոյի «Հայ տուն», ուր տեղի ունեցավ խաչքարի օրհնություն եւ հոգեհանգստյան արարողություն՝ համայնքի հանգուցյալ անդամների հոգիների խաղաղության համար աղոթքով: «Հայ տանը» կազմակերպված ճաշի ընթացքում Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց Չիլիի Հայ գաղութային վարչության ատենապետ Խուան Պաբլո Գույումջյանին, վարչականներին եւ նրանց գործակիցներին Չիլիում Հովվապետական այցի պատշաճ կազմակերպման համար: Վեհափառ Հայրապետը, նաեւ դիմելով ներկաներին, հորդորեց ամուր պահել ազգային ոգին ու ավանդույթները, շարունակել հավատարիմ մնալ Մայր Եկեղեցուն եւ մեր պատմության ու անցյալի ձեռքբերումների արժեւորումով՝ կերտել նոր օրը հայոց լուսառատ գալիքի:

***

Մայիսի 23-25-ը Նորին Սրբությունը եւ Վեհափառ Հայրապետին ուղեկցող շքախումբը Մայր Աթոռի բարերար Տիար Մարկո Զարիկյանի հրավերով մասնավոր այցով եղավ Վենեսուելայում: Մայիսի 23-ի վաղ առավոտյան Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ նրան ուղեկցող պատվիրակությունը ժամանեցին Վենեսուելայի մայրաքաղաք Կարակաս: Օդանավակայում Նորին Սրբությանը դիմավորեցին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ Գերաշնորհ Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Օհանյանը, Վենեսուելայի

Տայց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի բացումը

հայոց հոգեւոր հովիվ Հոգեշնորհ Տ. Փառեն ծայրագույն վարդապետ Վարդանյանը, Մայր Աթոռի բարերար Տիար Մարկո Զարիկյանը, համայնքի վարչականներ, հավատացյալներ: Հրաշափառի արարողությունը տեղի ունեցավ Կարակասի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Հավատացյալ հայորդիները Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին մեծ խանդավառությամբ եւ ծափահարություններով: Հոգեւորականները, եկեղեցու երգչախումբը եւ հավատացյալ հայորդիներ երգեցին «Ուրախ լեր» շարականը եւ «Հրաշափառ Աստուած» մեղեդին, որի հնչյունների ներքո Ամենայն Հայոց Հայրապետը թափորի ուղեկցությամբ մտավ եկեղեցի: Հանուն Մեծի Տանն Կիլիկո Արամ Ա Կաթողիկոսի ողջունելով Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ բարիգալստյան խոսք ասաց Հոգեշնորհ Տ. Փառեն ծայրագույն վարդապետ Վարդանյանը: Հոգեշնորհ Հայր Սուրբը, նշելով, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը նախամեծար նվիրական Աթոռն է մեր Սուրբ Եկեղեցու, Վենեսուելայի հայ համայնքի համար կրկնակի ուրախություն համարեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը, քանզի առաջին անգամն է Ամենայն Հայոց Հայրապետ այցելում Վենեսուելա: Նորին Սրբությունը հավատացյալներին ուղղված իր խոսքում նշեց, որ որպես Ամենայն Հայոց Հայրապետ՝ համայն հայության հոգեւոր սրբազան կենտրոն Սուրբ Էջմիածնի օրհնություններն է բերել Վենեսուելայի հավատավոր հայորդիներին՝զորացնելու նրանց հավատքը, ազգանվիրումն ու հայրենասիրությունը, մեր սրբազան արժեքներով ապրելու վճռականությունը: Հայոց Հայրապետը գնահատելի համարեց գաղութի հայախոս լինելը եւ հորդորեց նախանձախնդիր նույն ոգով հավատարիմ մնալ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, մեր հայրերի սրբազան ժառանգությանն ու ազգային ավանդներին: Նորին Սրբությունը, բարձր գնահատելով Գերաշնորհ Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Օհանյանի տասնամյակների նվիրյալ ծառայությունը մեր Սուրբ Եկեղեցուն եւ հավատավոր ժողովրդին, Սրբազան Հորը պարգեւատրեց պանակեով, իսկ Հոգեշնորհ Տ. Փառեն ծայրագույն վարդապետ Վարդանյանին՝ վարդապետական լանջախաչով: Հրաշափառի արարողությունից հետո Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցած բարերարներ լուսահոգի Ստեփան Զարիկյանի եւ Գրիգոր Ղազարյանի հիշատակին եկեղեցու բակում տեղադրված խաչքարի մոտ Նորին Սրբությունն աղոթեց բարեհիշատակ հայորդիների հոգիների խաղաղության եւ հանգստության համար: Այնուհետեւ Կարակասի Հայոց Ցեղասպանության զոհերի հուշարձանի մոտ, որը փոքր կրկնօրինակն է Ծիծեռնակաբերդի հուշարձանի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն: Նույն օրը երեկոյան «Եւրոբիլդինգ» հյուրանոցի հանդիսությունների սրահում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվո բարձրագույն պարգեւով՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ շքանշանով պարգեւատրեց արժանավոր հայորդի, Մայր Աթոռի բարերար Տիար Մարկո Զարիկյանին: Հանդիսավոր արարողությանը ներկա էին քաղաքական, մշակութային-հասարակական գործիչներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Մայիսի 24-ին Տիար Մարկո Զարիկյանի տանը տեղի ունեցավ ընդունելություն, որին ներկա էին պետական գործիչներ, դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ: Միջոցառման ընթացքում Նորին Սրբությունը ողջունեց պետական, դիվանագիտական գործիչների ներկայությունը, որը նույնպես վկայություն համարեց Վենեսուելայում հայորդյաց վաստակած սիրո եւ հարգանքի: Վեհափառ Հայրապետը, իր խոսքում անդրադառնա-

լով հայ ժողովրդի պատմությանն ու դարերի ընթացքում դիմագրաված փորձություններին եւ կերպած հաղթանակներին, ներկայիս եկեղեցական անդաստանում նշանակալի ձեռքբերումներին, անդրադարձավ նաեւ արցախյան խնդրին եւ Հայոց Ցեղասպանության համընդհանուր դատապարտման կարեւորությանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Մեծարգո քաղաքական եւ պետական այրեր,

Հարգարժան դեսպաններ, սիրելի ներկաներ,

Ողջունում ենք ձեզ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ Մեծարգո Տիար Մարկո Զարիկյանի հյուրընկալ հարկից ներս: Հարավային Ամերիկա կատարած Հովվապետական Մեր այցի շրջանակներում Տիար Մարկո Զարիկյանը հրաշալի առիթն ընձեռեց Մեզ այցելելու Վենեսուելա՝ հավատավոր Մեր զավակներին բաշխելու Սուրբ Էջմիածնի օրհնությունները եւ Հայրապետական հորդորով զորացնելու հայորդյաց եկեղեցասիրությունը, սրբազան մեր արժեքներով ապրելու կամքն ու վճռականությունը: Մեզ համար որպես Հայ Եկեղեցու հոգեւոր պետի եւ առաջին սպասավորի՝ մեծ գոհունակություն է տեսնել այն սերն ու հարգանքը, որ մեր ժողովրդի զավակները՝ իբրեւ արժանավոր քաղաքացիներ, վայելում են Վենեսուելայում:

Ուրախ ենք այս առիթով հանդիպելու նաեւ Ձեզ՝ մեծարգո պետական, հասարակական ու քաղաքական գործիչներիդ եւ դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներիդ: Ձեր ներկայությունը այս հանդիպմանը նույնպես վկայությունն է այդ իրողության: Մեր գնահատանքն ենք բերում Զարիկյան ընտանիքին այս գեղեցիկ նախաձեռնության համար:

Մենք եւ Մեզ ուղեկցող շքախմբի անդամները եկել ենք բիբլիական Արարատի երկրից՝ Հայաստան աշխարհից, ուր Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությամբ սերմանվեցին քրիստոնեության հունդերը, իսկ 301 թ. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայոց Հայրապետի եւ Սուրբ Տրդատ թագավորի ջանքերով առաջինը աշխարհում քրիստոնեությունը հռչակվեց որպես պետական կրոն: Քրիստոնեությունը, ինչպես վկայում է հինգերորդ դարի հայոց պատմիչը, եղավ մեր ժողովրդի համար իր մաշկի գույնը, եւ ոչ ոք ու ոչինչ չկարողացավ խախտել նրան իր սուրբ հավատքից: Դարերի ընթացքին մեր ժողովուրդը տեսավ բազում փորձություններ ու արհավիրքներ, նեղություններ, ավեր, կոտորած, սակայն Քրիստոսի Հարության հավատքով մեր ազգը վեր հառնեց եւ կերտեց իր նոր կյանքն ու հաղթանակները: Քսաներորդ դարասկզբին Ցեղասպանություն ապրած եղեռնահար մեր ժողովուրդը առ Ասված ապավինությամբ ուժ եւ զորություն գտավ ամոքելու իր վերքերն ու կորուստները եւ իր պատմական հայրենիքի մի փոքրիկ հատվածում հաստատեց իր անկախ պետականությունը: Արեւելյան Հայաստանում, որ մաս էր խորհրդային պետության, վերջինիս փլուզումից հետո, երկու տասնամյակ առաջ, վերահաստատվեց անկախ պետականությունը: Այսօր, լինելով քսանամյա երիտասարդ պետություն, դիմագրավելով ժամանակի մարտահրավերներն ու խնդիրները, Հայաստանը իր հաստատուն քայլերն է կատարում՝ որպես

ազատ, ժողովրդավար եւ իր հարեւանների հետ խաղաղության ու համերաշխության ձգտող պետություն:

Խորհրդային կարգերի փլուզմամբ ինքնորոշվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Լեռնային Ղարաբաղը պատմական Հայաստանի երկրամասն է, որ հակառակ իր բնիկ ժողովրդի կամքին ու ցանկությանը, Խորհրդային Միության կազմավորման առաջին տարիներին բռնակցվեց հարեւան Ադրբեջանին: Հաղթելով Ադրբեջանի կողմից իրեն պարտադրված պատերազմում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ժողովրդավարական սկզբունքներով կերտում է իր նոր կյանքը: Հայ ժողովուրդն այսօր Հայաստանում եւ Սփյուռքում ջանքեր է գործադրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման եւ խնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ: Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը մի նոր խթան պիտի հանդիսանա ամրագրելու խաղաղությունն ու կայունությունը, ամրապնդելու վստահության մթնոլորտը տարածաշրջանում:

Հայկական Սփյուռքը, ներառյալ Հարավային Ամերիկայում Հայոց թեմերը գերազանցապես ձեւավորվել են 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին Օսմանյան Թուրքիայում հայերի դեմ իրականացված Ցեղասպանության հետեւանքով: Մեծ մխիթարություն է Մեզ համար, որ այսօր շատ պետություններ, Եկեղեցիներ եւ կրոնական կազմակերպություններ ճանաչել եւ դատապարտել են Հայոց Ցեղասպանությունը, որոնց թվում նաեւ Վենեսուելայի խորհրդարանը: Մտահոգություն է Հայոց Ցեղասպանության շարունակական մերժումը Օսմանյան կայսրության ժառանգորդ Թուրքիայի Հանրապետության կողմից, ինչպես եւ Հայաստանի Հանրապետության շարունակվող շրջափակումը եւ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար նախապայմանների առաջադրումը:

Ուրախ ենք արձանագրել, որ Հայաստանում այսօր վերազարթոնք է ապրում Եկեղեցին Հայաստանյայց եւ հավատքը մեր ժողովրդի, վերազարթոնք է ապրում նաեւ Լեռնային Ղարաբաղում, ուր փակված էին եկեղեցիները: Հայ Առաքելական Եկեղեցին ներկայիս ամոթում է Հայոց Ցեղասպանության եւ խորհրդային ասփվածամերժ իշխանությունների հասցրած վերքերը, վերականգնում կորուստները նոր իրագործումներով, հոգեւորականաց ծառայությամբ եւ աշխարհասփյուռ հայության աջակցությամբ: Ամրապնդվում եւ արդյունավորվում է Եկեղեցի եւ հասարակություն կապը: Հայաստանի Հանրապետության հատուկ օրենքով կարգավորված են Եկեղեցի եւ պետություն հարաբերությունները: Եկեղեցու քարոզչական առաքելությունն արդյունավորվում է ինչպես ավանդական քարոզչությամբ, այնպես էլ արդի սոցիալական ցանցերի, հեռուստատեսության եւ տեղեկատվական այլ տեխնոլոգիաների կիրառմամբ: Գործուն է երիտասարդության դերը Եկեղեցում, զորանում է նրանց հոգեւոր կյանքը նաեւ կրթական հաստատություններում՝ եկեղեցականների հոգեւոր-կրթադաստիարակչական աշխատանքի շնորհիվ: Գործունեության մեծ դաշտ է մեզ համար էկումենիկ շարժումը՝ եկեղեցիների միջեւ սիրո, համագործակցության եւ հաղորդութենական միության խթանման համար: Եղբայրական ոգով զարգանում եւ սերտ են հարաբերությունները Կաթոլիկ, Ուղղափառ եւ ավանդական այլ Եկեղեցիների հետ: 2001 թ. Հայ Եկեղեցին տոնեց Հայոց դարձի 1700-ամյակը: Այդ հանդիսություններին Հայաստանում իրենց մասնակցությունը բերեցին Հռոմի Պապ Հովհաննես-Պողոս Երկրորդը, Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Առաջինը, Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարք Ալեքսի Երկրորդը, Ուղղափառ

Եկեղեցիների պետեր, Անգլիկան Եկեղեցու Արքեպիսկոպոսը, Բողոքական եկեղեցիների ներկայացուցիչներ: Միջեկեղեցական հարաբերություններն արդյունավոր ձեւավորվում են ոչ միայն Եկեղեցիների պետերի, այլեւ թեմական ներկայացուցիչների մակարդակով: Այս իրողությունը Մենք հաստատեցինք նաեւ Հովվապետական Մեր այցի ընթացքին Հարավային Ամերիկայի թեմեր: Սերտ են Հայ Եկեղեցու հարաբերությունները նաեւ Հայաստանի Հանրապետությունում հավատրմագրված դիվանագիտական կառույցների հետ, որոնց ներկայացուցիչները Մայր Աթոռ իրենց պարբերաբար այցելություններով եւ եկեղեցական տոներին իրենց մասնակցությամբ մեծ նախանձախնդրություն են դրսեւորում մեր փոխադարձ կապերի առավել զորացման եւ ամրապնդման համար:

Սիրելիներ, Մեր շնորհակալությունն ենք հայտնում այս հանդիպմանը ձեր մասնակցության համար եւ մաղթում ենք ձեզ հաջողություններ ու ձեռքբերումներ դիվանագիտական պատասխանատու առաքելության մեջ՝ ի խնդիր երկրների եւ ժողովուրդների միջեւ եղբայրության զորացման եւ համագործակցության արդյունավորման:

Մեր բարեմաղթանքն ու օրհնություններն ենք բերում Զարիկյան ընտանիքին այս գեղեցիկ առիթն ստեղծելու եւ Հայոց Հայրապետին ձեր ներկայությամբ եւ մասնակցությամբ պատվելու համար:

Աղոթում ենք, որ Տերը երկար տարիների արեւշատություն պարգեւի ձեզ, եւ Իր երկնառաք շնորհները բաշխի Վենեսուելային եւ ձեր երկրներին ու ժողովուրդներին՝ պահելով նրանց սիրո եւ խաղաղության մեջ»:

Ցուցադրվեց Վեհափառ Հայրապետի տասնամյա գահակալության շրջանում իրականացված նշանակալի ձեռքբերումների մասին պատմող տեսաֆիլմը, որն արժանացավ ներկաների մեծ հավանությանը:

Մայիսի 25-ի առավոտյան Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու սրահում կազմակերպվել էր հանդիպում Քույր եկեղեցիների ներկայացուցիչների, Վենեսուելայի Ազգային վարչության անդամների, հավատացյալների հետ: Վեհափառ Հայրապետն իր խոսքում կարեւորեց Քույր եկեղեցիների սերտ հարաբերություններն ու գործակցությունը աշխարհում Քրիստոսի Ավետարանի լույս պատգամների տարածման, մարդկության կյանքում ծառացած հիմնախնդիրների լուծման համար: Նորին Սրբությունը բարձր գնահատեց նաեւ Վենեսուելայի Ազգային վարչության գործունեությունը եւ հորդորեց նույն ազգանվիրումով եւ եկեղեցասիրությամբ շարունակել նվիրյալ ծառայությունը Վենեսուելայի հայ համայնքին: Այնուհետ Ամենայն Հայոց Հայրապետը հրաժեշտ տվեց Վենեսուելայի հավատացյալներին եւ իր գլխավորած պատվիրակության հետ ճանապարհվեց դեպի Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Մայիսի 26-ի երեկոյան Մայր Տաճարի զանգերի դողանջներն ավետեցին Հարավային Ամերիկա կատարած հովվապետական այցից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերադարձը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Մայր Աթոռի միաբանների թափորով Ամենայն Հայոց Հայրապետն առաջնորդվեց Մայր Տաճար, ուր գոհաբանական աղոթք մատուցվեց Վեհափառ Հայրապետի ժամանման առիթով:

Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ